№ 181 ՇԱԲԱԹ 17 ՕԳՈՍՏՈՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 17 ՕԳՈՍՏՈՍԻ № 181

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԻՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Ցայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ) —20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и Kº, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 32, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 Թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 Թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» և հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Օգոստոսի 13-ին երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց՝

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԸ,

որի քրոջ որդիք Գայիանէ Բաղդանեանը, Կատարինէ Հայրումեանը, Փլորա Զաքարեանը և Մագլէն Տէր-Բարսեղեանը իրանց ամուսիններով և որդիքերանցով ցաւօք սրտի յայտնում են բարեկամներին և յարգողներին:

Հոգեհանգիստը կը կատարվի այսօր, շաբաթ, օգոստոսի 17-ին, երեկ. ժամը 7-ին (Елисаветинская ул. № 40).

Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ վաղը, ԿԻՐԱԿԻ, օգոստոսի 18-ին, առաւօտեան ժամը 10-ին, դէպի Վանքի մայր եկեղեցին, իսկ թաղումը Վէրայի գերեզմանատանը:

651. 1—1

ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ
ԴՊՐՈՑՈՒՄ

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ և ՆՈՐ ԸՆԴՈՒՆՎՈՂՆԵՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ սկսվելու են օգոստոսի 26-ին:

Լայն չափով ազատ տեղեր կան առաջին պատրաստականում և երրորդ հիմնական դասարանում (ուս. VI տ.). Մնացած դասարաններում՝ սահմանափակ թւով:

Խնդիրների հետ պէտք է ներկայացնել ծննդեան և ծաղկի վկայաթղթերը մինչև օգոստոսի 26-ը:

Հոգաբարձութիւն Գայիանեան օր. դպրոցի

առ. (15, 17, 24, 25) 632. 4—2

Առաջնակարգ մեծ ցիրկ ԵՂԲ. ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ

Միքայէլեան փող., Մուշտայիդ այգու մուտքի մօտ, սեփ. ամ. շէն.:

Շաբաթ, օգոստոսի 17-ին, կը տրվի, մայրաքաղաքների օրինակով, բօմօնդ ներկայացում «ՍՈՒԲՐՕՏՆԻԿ» անունով: Այսօր, ինչպէս միշտ, ծրագիրը կազմված է բացառապէս առաջնակարգ աչքի ընկնող նօմէրներից: Այսօր 4 սատանայ կը կատարեն ցիրկի գմբէթի տակ Թիֆլիսում ցոյց չը տրըված նօմէրներ: Թամարան նոյնպէս կը զարմացնէ հասարակութեանը իր գլխապտոյտ ձևերով: Ակրօբատների իտալական յայտնի Դէլլի-Կազօ ընտանիքը կը կատարէ մի շարք ապշեցուցիչ նօմէրներ: Այսօր նոյնպէս մասնակցում է աննման ծաղրածու ՌՕԲԷՐՏԸ մարզված խոզու և շան հետ մաթեմատիկոս Տիրառ. յայտնի Բրօկարսը, սիրելի կատակախօսներ եղբ. ՎԻՆՋԷՆՑՕ: ԱՆՕՆՍ! վաղը կիրակի, օգոստոսի 18-ին, կը լինի երկու տօնական ներկայացում: Ցերեկով ներկայացումը հանրամատչելի գներով: Սկիզբն է երեկոյեան ժամը 8½-ին:

առ. 650. 1—1

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԻՃԱԿԸ

Հայկական հարցը կարծէք արդէն մոռացութեան է ենթարկվում:

Բուլգարիայի գործած մեծ սխալը, որ ճակատագրական հարուած հասցրեց իրան՝ Բուլգարիային, ճակատագրական հարուած հասցրեց և հայկական հարցին: Ադրիանուպոլսի վերագրաւումը թիւրքերի ձեռքով՝ նորից հնարաւորութիւն տուեց թիւրք կառավարութեանը խրոխտ դիրք բռնել Եւրոպայի և մեծ պետութիւնների հանդէպ:

Ադրիանուպոլսի Բուլգարիային յետ դարձնելու հարցը պառակտում և գժտում ձգեց մեծ պետութիւնների մէջ, և Թիւրքիան շտապեց օգտվել այդ նոր անակնկալ դէպքից:

Եւրոպական կօնցէրտի նշանակութիւնը, ազդեցութիւնը և հեղինակութիւնը չափազանց ընկաւ ոչ միայն Թիւրքիայի, այլև ամբողջ Արևելքի աչքում:

Դեռ առաջ բալկանեան փոքր պետութիւնները արհամարհեցին մեծ պետութիւնները, չը կամեցան ունկնդրել նրանց հրաւէրին, իսկ յետոյ՝ Թիւրքիան, խրախուսված, առ ոչինչ համարեց կօնցէրտի ձայնը և հեղինակութիւնը և ոտնակոխ արեց Լօնդօնի դեսպանախորհրդի որոշումները:

Այսօր մեծ պետութիւնները անկարող են յարգել տալ Թիւրքիային իրանց որոշումները: Եւ այդ ոչ թէ նրա համար որ կարող չեն. ոչ, այլ որովհետև նրանք միաբան չեն, չեն կարողանում համաձայնվել Թիւրքիայի բաժանման մասին:

Մի րոպէ Ռուսաստանը սպառնաց գրաւել Հայաստանը, եթէ Թիւրքիան չը թողնէ Ադրիանուպոլիսը, բայց երբ Գերմանիան հակառակեց, Հայաստանի՝ ռուսների ձեռքով գրաւվելու յոյսն էլ չքացաւ:

Գերմանիան կամենում է, որ Հայաստանը մնայ Թիւրքիայի ձեռքում, և ինքն կուլտուրապէս նուաճէ այդ երկիրը, որ Թիւրքիան ինքը մտցնէ ռէֆօրմներ:

Բայց Թիւրքիան, եթէ Ադրիանուպոլսից չը հեռացվի, եթէ իր ամբարտաւանութեան համար, որ արհամարհեց Լօնդօնի դեսպանախորհրդի որոշումները, չը պատժվի, ոչ մի ռէֆօրմ ոչ միայն Հայաստանում, այլ և ոչ մի տեղ չի մտցնի:

Եւ այսօր հայկական հարցի բաղդը կախված է այն հանգամանքից, թէ արդեօք Ադրիանուպոլիսը յետ կը խլվի թիւրքերի ձեռքից թէ ոչ: Եթէ ոչ, ուրեմն այս անգամ էս հայկական հարցը կը վիժի և գոհ կը գնայ մեծ պետութիւնների անզուսպ շահասիրութեան, որովհետև միայն շահասիրութիւնն է, որ թոյլ չէ տալիս եւրոպական մեծ պետութիւններին՝ ստիպել Թիւրքիային յարգել Լօնդօնի դեսպանախորհրդի որոշումները:

Ցաւալի է, որ Անգլիան էս ույժ է տալիս Գերմանիայի դիվանագիտութեան:

Մի ժամանակ, երբ Անգլիան կամենում էր լուծել հայոց հարցը, Ռուսաստանն էր, որ հակառակեց: Այսօր Ռուսաստանն է կամենում լուծել հայոց հարցը, Անգլիան է հակառակում:

Ոչ, հայ ժողովուրդը չար աստղի ներքոյ է ծնված, ինչպէս ասում են:

Արդեօք հասել է ժամը, երբ վերջնականապէս պէտք է կտրենք մեր յոյսերը քաղաքակիրթ Եւրոպայի դիւանագիտութեան օգնութիւնից, հասել է ժամը, երբ մենք պէտք է ապաւինենք միայն մեր ույժերին, թէ դեռ պէտք է շարունակենք հաւատալ եւրոպական պետութիւնների խոստումներին.

Մեզ թւում է, թէ դրութիւնը թէև խիստ ծանր է, բայց որչափ որ չէ լուծված Ադրիանուպոլսի հարցը, դեռ յուսահատվել պէտք չէ:

Հ. Առաքելեան

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Կ. Պօլսից հեռագրում են, որ Թրակիա ուղարկվող զօրամասերը լրացնելու համար նորակոչներին հաւաքելը շարունակվում է արագութեամբ: Յունական և հայ գիւղերը հրաժարվում են զօրք տալ:

Իշխանութիւնները դիմում են բռնի ույժի:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

15 օգոստոսի

Նիժնի-Նովգորոդ.—Եկաւ մինիստրների խորհրդի նախագահ Կօկօվցեվը և կայարանից գնաց տօնավաճառի տունը, ուր նրա համար յատկացրել են բնակարան:

Նիժնի-Նովգորոդ. — Համառուսական վաճառականութիւնը հանդիսաւոր ճաշկերոյթ տուեց ստատս-սեկրէտար Կօկօվցեվին:

Թէհրան.—Համոզվելով որ անօգուտ է Քիւրդստանում կռիւ մղել, երբ ներկայ են պարսիկ կօզակները, Սալար-ուդ-Դօվլէն բաստ նստեց Քիրմանշահի ռուսաց հիւպատոսարանում:

Թէհրան.—Շարունակում է յուզիչ տեղեկութիւններ ստացվել հիւսիսից բախտիարների մէջ սկսված խլրտումների մասին, որոնք պատրաստվում են վրէժ լուծել ժանդարմներից վերջին ընդհարման մէջ փչացած իրանց ցեղակիցների համար: Մօտ 2000 բախտիարներ պատրաստ են արշաւելու Թէհրանի վրա:

Կահիրէ.—Համաձայնվելով Եգիպտոսի կապիտուլյասիօնը վերացնելու, պետութիւններից մի քանիսը պահանջում են, որպէսզի անձնական իրաւունքների հարցը ենթարկվի հիւպատոսական դատարանների իրաւասութեանը:

Լօրդ Կիչնէրը, ցանկանալով անձամբ վերահասու լինել նոր օրէնսդրական պալատի ընտրութիւններին, յետաձգել է ընտրութիւնները նոյեմբերին:

Տօկիօ.—Սէյիւկայ կուսակցութեան նախկին պարագլուխ Օսակին հանդէս է եկել «Ջիձիում» Եապօնիայի ցամաքային քաղաքականութեան կողմնակիցների դէմ, որոնք պահանջում են ցամաքային զօրքը աւելացնել: Օսակին կարծում է, թէ Եապօնիայի և Ռուսաստանի մրցութեան շարունակումը մայր ցամաքի վրա ի վերջոյ կարող է քայքայել Եապօնիայի ֆինանսները:

Շանխայ.—Նանկինում կռիւը շարունակվում է: Գեներալ Չժանսիւնը ռմբակոծում է քաղաքը: Հաղորդում են, որ հիւսիսային զօրքերը ամրութիւնների տակը ականներ են դնում, որպէսզի կարողանան քաղաք մտնել:

Պօզնան.—Օգոստոսի 14-ի երեկոյեան լեհական հիւրանոցի առաջ լեհ ամբոխը սուլոցներով և հայհոյանքներով դիմաւորեց լեհական մագնատներին, որոնք վերադառնում էին ապաքանքի ճաշկերոյթից: Լուրջ դէպքեր և կալանաւորութիւններ չեն եղել: Ոստիկանութիւնը ցրել է ամբոխը:

Բերլին.—Ցածանաւատորմի հրամանատարից ստացված հեռագիրը յայտնում է, որ «Էմդէն» յածանաւը գնդակահարել են Բուխիի մօտիկ գտնվող ապստամբների ամրութիւններից: Յածանաւը 25 գնդակ արձակելով հարկադրեց ամրութիւններին լռել:

Մադրիդ.—Հիւսիսային Սպանիայում սկսվեց երկաթուղային բանւորների գործադուլ, մի քանի բանւորների և ինժեներների միջև ծագած միջադէպի առիթով:

Բարսելօնա.—Կատալօնիայի արդիւնաբերական քաղաքներում շարունակվում է գործադուլը: Բադալօնում գործադուլարարները արգելք էին լինում աշխատանքները վերսկսվելուն: Ժանդարմները ներկացրին սրերը և վիրաւորեցին երկու հոգու: Մատարօյում ժանդարմները վիրաւորել են 4 բանւորի:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

15 օգոստոսի

Բելգրադ.—Այսօր վճռվում է սերբչեռնօգօրիական սահմանի որոշման հարցը: Պլեվլէն և Դեակօվօն անցնում են Չեռնօգօրիայի ձեռքը:

Աթէնք.—Գերմանիան տեղեկացրել է Յունաստանին, որ նշանակում է բարձրաստիճան օֆիցէրներից մէկին Աթէնքում ծովային գործակալի պաշտօնով:

Թրակիայից եկող բազմաթիւ փախստականները հաղորդում են, որ թիւրքերը անհամար գազանութիւններ են գործում Կիրք-Քիլիսայում և Թրակիայի զանազան մասերում, անտանելի դարձնելով քրիստոնեաների կեանքը: Սալօնիկում և Պիրէյում արտակարգ միջոցներ են ձեռք առնված, նկատի առնելով զօրքերի վերադարձը դաւառներից, ուր ներկայումս տարափոխիկ հիւանդութիւններն են համաճարակում:

ՄԻԱՑԵԱԼ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՄԵԿՍԻԿԱՅԻ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

15 օգոստոսի

Վաշինգտօն.—Վիլսօնը կարդացել է կօնգրէսում մեկսիկեան գործերի վերաբերեալ յատուկ զեկուցագիրը. Ամերիկան ցանկանում է Մեկսիկայի նըկատմամբ գործել անկեղծ և անշահասէր բարեկամութեամբ, ղեկավարվելով Մեկսիկայի իրա շահերով: Պետութիւնները սպասում են, որ Միացեալ Պետութիւնները կը վարվեն իբրև Մեկսիկայի մերձաւոր բարեկամ: Միացեալ Պետութիւնները ոչ մի հիմք չեն գըտնում առաջարկված բարեկամական ծառայութիւնները մերժելու համար: Անհամբերողութիւն ցոյց տալը անտեղի կը լինի պետութիւնների կողմից: Պետութիւնները պէտք է սպասեն յետագայ նպաստաւոր դէպքին, իրանց ծառայութիւնը կրկին առաջարկելու համար: Պետութիւնների բոլոր քաղաքացիներին պէտք է առաջարկվի անմիջապէս հեռանալ Մեկսիկայից, Մեկսիկա զէնք ներմուծելուն պէտք է վերջ տրվի:

Վաշինգտօն.—Նախագահ Վիլսօնը առաջարկեց Միացեալ Պետութիւնների քաղաքացիներին անմիջապէս հեռանալ Մեկսիկայից: Դեսպանութեանը և հիւպատոսներին առաջարկված է տեղեկացնել քաղաքացիական և զինւորական իշխանութիւններին, որ նրանց վրա պատասխանատուութիւն է ընկնում Միացեալ Պետութիւնների քաղաքացիների կեանքի և գոյքի դէմ որևէ բռնութիւն գործելու դէպքում:

Նիւ-Եօրկ.—Մեկսիկայից հեռագրում են, որ մեկսիկական կառավարութիւնը լռում է Վիլսօնի՝ կօնգրէսին տուած զեկուցման առիթով: Երկրորդ յայտագրի մէջ Վիլսօնը պահանջում է անմիջապէս պատասխանել իր առաջադրութեանը, որպէսզի գեներալ Խուէրտային չը թոյլատրվի մասնակցել ընտրողական պայքարին: Վիլսօնը ասում է, որ եթէ Մեկսիկան խոլոյն պատասխանէ դրականաբար, նա ամերիկական բանկիրներին հաւաստիացումներ կը տայ, որ կառավարութիւնը բարեհաճ է վերաբերվում Մեկսիկային փոխառութիւն տալուն: Մեկսիկայի մինիստր Գամբօան պատասխանել է, որ ոչ մի փոխառութիւն չի գրգի նրանց, որոնց յանձնարարված է ազգի արժանապատւութիւնը պաշտպանելու գործը, հրաժարվել իրանց պարտականութիւնից: Խուէրտային հեռացնելու պահանջը չի կարող թոյլատրվել, որովհետև Մեկսիկան պատասխանելով դրականաբար. դրանով էլ նա ոչ միայն կը հրաժարվի սուվերէնիտէտից, այլ և կը վարկաբեկէր իր ազգն, թոյլ տալով որ Միացեալ-Պետութիւնների նախագահը կարողանար իր վէտօն դնել Մեկսիկայի նախագահի ընտրութեան վրա:

Սան-Անտօնի (Տէխաս).—Հեծելազունդի մի զօրամաս և թնդանօթաձիգների մի հրէտանի մօտեցան մեկսիկական սահմանագլխի Բրօունսվիլլ քաղաքին, ուր կենտրօնացել են ապստամբների ույժերը: Լարէդօյի դէմ, ուր գտնվում է մեկսիկական դաշնակից զօրքերի գլխաւոր բանակատեղին, դրված են թնդանօթներ: Մի նոր զօրամաս 1000 հոգուց բաղկացած պատրաստ է ճանապարհվելու:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ

III

Պարսկաստանում գիւղացին հող չունի, պետութիւնն էլ հող համարեա չունի. հողը պատկանում է մօլլաներին, մգկիթներին, խաներին, սարդարներին, հաջիներին, սէյիդներին, ազաներին: Միջնադարեան աւատականութիւնը փայլում է իր բոլոր իրաւունքներով: Գիւղատիրոջ՝ աղայի լիակատար կամքից ու քմահաճոյքից է կախված գիւղացուն, աշխատաւորին պահել կամ վռնտել, շատ տալ կամ քիչ, սովաման անել թէ թողնել քարշ տալու իր գոյութիւնը: Եւ դրանք են, որ թաղված փառքի ու զեղխութեան մէջ, շռայլութեան և շուայտութեան ճիրաններում, ծծում են ժողովրդի արիւն-քրտինքը, հիւծում նրան և գոսացնում այն բազուկները, որ իրանց փառք ու զեղխութիւն է պարգևում: Փոքր մօտիկ անցեալին. տասնեակ տարիներ առաջ, պարսիկ կալուածատէրը անհամեմատ չափաւոր կեանք ունէր, այսինքն՝ բաւականանում էր տեղական ցոփ կեանքով և զեղխութիւններով, ժողովրդից, երկրից կողոպտածը՝ իր երկրումն էր շռայլում, իր երկրում թողնում. վերջին տարիների «ազատական» կոչված հովերը՝ նրան քշեցին դէպի արտասահման, դէպի Պարիզի և Վիէննայի կաֆէ-շանտանները, ուր անխնայ սպառվում էին պարսիկ գեղջուկի դառն քրտինքով կազմված հարիւր-հազարները, և նա, կալուածատէրը, զինված ցիլինդրով ու պէնսնէով, վերադառնում էր հայրենիք՝ իր ժողովրդի արեան վերջին կաթիլը քամելու և նոր հարիւր-հազարներով վերադառնալու եւրոպական մայրաքաղաքների կաֆէ-շանտանները, շարունակելու նորանոր օրգիաներ, կուլտուրական լրբութիւններ և քաղաքակրթված անառակութիւններ: Եւ ովքե՞ր են դրանք. պարսիկ ժողովրդի ազատագրական շարժման պարագլուխներ, սահմանադրութիւն գործադրող պարլամենտականներ, ազատութեան անձնուէր «հերոսներ»... Ողորմելի երկի՜ր, ողորմելի ժողովուրդ, սրբապղծված գաղափարներ:

Ո՞ւր են, ինչ են անում մի երկու տարի առաջ Գարիբալդիների հետ համեմատվող Սաթթար-Սարդարները, Բաղըր-խաները, Սիփէհդարները, Սարդար-Ասադները... Չե՞ն տեսնում արդեօք երկրի քայքայումը, ժողովրդի կոտորածը, սովն ու սրածութիւնը, թալանն ու աւերածը... Սաթթարն ու Բաղըրը իրանց միասին վերջացած են համարում՝ ամսական 500 թումանի կենսաթոշակները կանոնաւոր ստանալով և Թէհրանի հիւրանոցներում փառաւորապէս ծախսելով. Սիփէհդարն ու Սարդար-Ասադը Եւրոպայից դարձրել են իրանց պապոնց տուն, տարին մի քանի անգամ գնում են իրանց ոյժերը կազդուրում և վերադառնում, իսկ Եփրեմը չը կայ... Նրա սալմաստցի կինն է մնացել այրի ու անմխիթար, որ հալածվում է նոյն իսկ «իւրայիններից», որոնք կամենում են հանգուցեալի «դառն քրտինքի» աշխատանքից մնացած հարիւր-հազարներից իրանք էլ բաժին ստանալ... Գաղափարական պայքար...

Կօզակների բրիգադան, ահագին դղրդիւնով, հարայ-հրոցով, քաղաքների և գիւղերի միջից անցնելիս, ռուսական կօզակների եղանակներին նմանեցված «Ա՜յ ալագեօզ, ա՜յ ղարագեօզ» երգելով, մեծ շփոթ ու աղմուկ հանելով՝ գնացին Համադան Սալար-ուդ-Դովլէին ձերբակալելու. Էլ ի՜նչ հեռագիրներ դէպի Թէհրան, թէ իբր շահնշահի հերոսական բանակին արդէն աջողվել է անհանգիստ Սալար-ուդ-Դովլէին ձերբակալել և մի անգամ ընդ միշտ՝ վերջ տալ Պարսկաստանի խռովութիւններին։ Անցնում են մի քանի օրեր ևս, և յայտնվում է թէ ի՜նչ Սալար-ուդ-Դովլէ, ի՜նչ ձերբակալութիւն, ո՞վ, ե՞րբ... Այդ բոլորը եղել են քաղաքական խաղեր։ Փաստն այն է, որ ցանկալի է եղել կօզակների բրիգադան առժամանակեայ կերպով հեռացնել Թէհրանից, որ այնտեղի ապագայ որոշ գործերին ներկայ չը լինեն, և ահա դրա շուրջն էլ յօրինվում է Սալար-ուդ-Դովլէի դէմ գնալը, նրան իբր ձերբակալելը, «աղնիւ խօսքին» հաւատալով արձակելը և այլն։ Ճիշդ է, պարսիկ կօզակների բրիգադան գնում հասնում է Սալար-ուդ-Դովլէի բանակին՝ Քիւրդստանի սահմաններում, բայց կօզակների մարզիչ ռուս օֆիցերը բաւականանում է այցելութեան գնալ եռանդուն շահզադէին. նա էլ փոխադարձ այցելութեան է գալիս շահնշահի կօզակների բանակը, պատւի ու մեծարանքի արժանանում, նորից վերադառնում իր բանակը, շարունակում իր արկածախնդրական գործերը։ Ահա լեգենդայի ամբողջ իրականութիւնը...

Ի՞նչ են անում «ազատութեան քաջամարտիկ հերոսները»՝ բախտիարցիք Թէհրանում և շվէդական մարզիչներով նորակազմ ժանդարմէրիան։ Մի շաբաթ առաջ, մի ժանդարմ կամենում է մի ոչխար գնել. մի բախտիարցի արժէքն աւելացնում է, կամենալով ինքը գնել. սկսվում է վէճը. վրա են հասնում մի քանի ժանդարմներ և բախտիարցիք. վէճը փոխվում է կռւի և հրացանները որոտում են, դիակները ցած փռվում։ Բախտիարցիք, թւով 700 հոգի, հաւաքվում են իրանց պարագլուխ Սարդար-Ասադի որդու բնակարանը։ Շվէդացի օֆիցերները իրանց մօտ 2000 ժանդարմներով պաշարում են այդ բնակարանը. սկսվում է հրացանաձգութիւնը և պաշարող ժանդարմներից մօտ 60 հոգի գետին են փռվում։ Միջամտում են մինիստրները. կոտորածը դադարում է. սկսվում են բանակցութիւնները։ Ժանդարմէրիան պահանջում է զինաթափ անել բոլոր բախտիարցիներին և քաղաքից հեռացնել. իսկ բախտիարցիք պահանջում են, որ ժանդարմէրիան մնայ իր դերի մէջ, այն է՝ քաղաքներում գործ չունենայ, այլ միայն ճանապարհների վրա հսկէ և այլն։

Լսում ենք, որ Լօռիստանի բախտիարցիք, լսելով Թէհրանի միջադէպը, հարիւրաւորներով դիմում են մայրաքաղաք, իրանց ցեղակիցներին օգնութեան։ Ժանդարմէրիան էլ լուրջ պատրաստութիւններ է տեսնում։ Եւրոպացիներից տասնեակ միլիոններով պարտք է բարդվում. պարսիկ գեղջուկը պիտի տնքայ այդ պարտքի տոկոսների տակ, իսկ այդ միլիոնները լափող բախտիարցիք, ժանդարմները և կօզակները՝ փոխանակ Պարսկաստանի շահերին ծառայելու, փոխանակ երկիրը բարեկարգելու, պիտի ծառայեն օտարների շահերին ու ինտրիգներին... Իսկ մինիստրնե՞րը. նրանք կանոնաւոր ստանում են իրանց ռոճիկները, շքանշանները, գիւղերի եկամուտները, ցորենը ամբարում և տասնապատիկ գնով շահվում... Իսկ այնտեղ, փողոցի մէջտեղը, պառաւի միակ պատանի որդին է մեռնում քաղցից... Անցնում է իշխանը իր կառքով, հաջին՝ իր ջորիով, մոլլան՝ իր իշուկով։ Լսվում է պառաւի ձայնը՝ «Ալլա՛հ, Ալլա՛հ»...

Մար

Ենդէլ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴ

(Յօգուտ Ղարաբաղի թեմ. դպրոցի եղած հանգանակութիւնները)

Բաղդասար Արղութեան՝ 200,000 ր., Միքայէլ Արամեան՝ մի տուն, արժողութեամբ մօտ 40—45,000 ր., Յ. Մ. և Ս. Աղամեաններ՝ 20,000 ր., Պ. Ղուկասեան՝ 10,000 ր., Դ. Աւան-Իւզբաշեան՝ մի տպարան և 10,000 ր., Մն. Խունունց՝ 7000 ր., Գր. Առաֆելեան՝ 5000 ր., Ա. Ղուկասեան՝ 3000 ր., Մ. Աւագեան՝ 3000 ր., Մ. Դօլուխանեան՝ 2000 ր., Ն. Առաֆելեան՝ 2000 ր., Ս. Առաֆելեան՝ 1500 ր., Սարուխանօվօ-Կուրինսկի Ակց. Ընկ.՝ 1000 ր., Եղբ. Ստեփանեաններ՝ 1000 ր., Եղբ. Ի. և Դ. Բէգլարեանների ժառանգներ՝ 1000 ր., Ա. Վաչեան՝ 500 ր., Հ. Գանջեցեան՝ 500 ր., Հմ. Նալբանեան՝ 500 ր., Ա. Նասիբեան, Զ. և Յ. Տէր-Պետրոսեաններ և Ա. Յովսէփեան Ընկ.՝ 500 ր., Եղբ. Թումայեանցներ՝ 600 ր., Գ. Տէր-Մարգարեան՝ 500 ր., Ա. Պարոնեան՝ 200 ր., բժ. Ե. Վարդապետեան միանուագ՝ 200 ր.. իսկ իւրաքանչիւր տարի՝ 40-ական ր., Ա. Տէրտէրեան՝ 200 ր., Տ. Բէգլարեան՝ 200 րուբլի, բժշկապետ Յ. Գասպարեան 100 ր., բժ. Գ. Սաղեան՝ 100 ր., Յ. Պետրոսեան՝ 100 ր., Ն. Տէր-Ղազարեան, բժ. Տ. Իսախանեան, Աշ. Բարութչեան, Հ. Տէր-Առաքելեան և Յ. Փանեան՝ 25-ական ր., Ն. Ծգնաւորեան, Ն. Դանիէլեան, Ս. Ղուլիքեխայեան, Ա. Աւագեան և Դ. Տէր-Դանիէլեան՝ 48 ր., Անդր. Սարգսեան և Բ. Շըխեան 200-ական ր., Բ. Յակոբեան և Ընկ.՝ 300 ր., Մ. Սարումեան՝ 50 ր., Յ. Մովսիսեան և Ա. Խաչատրեան՝ 50 ր., Ն. ք. Տէր-Կարապետեան՝ 20 տարվայ ընթացքում տարեկան 50 ր., Մ. Շահնազարեան՝ 200 ր., Յ. Իւզբաշեանի ձեռամբ՝ 189 ր., Վարանդայի II մասի գործակալի միջոցով՝ 20 ր., Վարանդայի III մասի՝ 42 ր. 25 կ., Վարանդայի IV մասի՝ 100 ր., Վարանդայի V մասի՝ 23 ր. 60 կ., Դիզակի III մասի՝ 59 ր. 60 կ., Խաչէնի I մասի՝ 121 ր. 40 կ., Խաչէնի II մասի՝ 24 ր. 47 կ., Խաչէնի III մասի՝ 52 ր. 70 կ., Ջրաբերդի I մասի՝ 68 ր. 94 կ., Ջրաբերդի II մասի 99 ր. 99 կոպէկ։ Ընդամէնը՝ 317,724 րուբլի 95 կոպէկ։

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄ. ԴՊՐՈՑԻ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

I

Շուշի, 31 յուլիսի

Մեր հասարակական հերթական հարցերից մէկը՝ թեմական դպրոցի տեսչի ընտրութեան հարցն է։

Եթէ ի նկատի ունենանք, թէ դպրոցը ինչ ահագին դեր է խաղում մեր մատաղ սերնդի կեանքի մէջ, հանդիսանալով միակ տիրապետող փակտոր նրա բարոյական և մտաւոր հօրիզոնի վրա, եթէ ի նկատի ունենանք, որ թեմական դպրոցի տեսուչը, իբրև այդ դպրոցի ղեկավար ներկայացուցիչ, իր ձեռքում ունի բռնած մատաղ սերնդի մտաւոր և բարոյական զարգացման ղեկը, դժուար չէ հասկանալ, թէ ինչու տեսչի ընտրութեան խնդրով զբաղվում է և քաղաքիս հասարակութիւնը։

Թեմական դպրոցի տեսչի ծանր և պատասխանատու պաշտօնի համար անպայման պահանջվում է մի անձն, որ լինի բառի բուն իմաստով կրթված, զարգացած, համոզված գիտութեան հանրամարդկային գաղափարների մէջ և կարող՝ այդ գաղափարները ներշնչելու իր սաներին, որ կարողանար կրթական գործը դնել ժամանակակից մանկավարժական գիտութեան առողջ հիմքերի վրա և այլն։ Այդ նոյն նպատակին հասնելու համար պէտք է նաև մի կողմից որոշել հոգաբարձութեան և մանկավարժական ժողովի իրաւունքների սահմանները ուսումնական մասի մէջ, միւս կողմից պէտք է կազմակերպել օրինաւոր ուսուցչական խումբ, որպէսզի այդ խումբը իր ձեռնհաս և համերաշխ գործունէութեամբ կարողանայ բարձրացնել դպրոցի ուսումնական մասը և տայ հասարակութեանը մտաւորապէս աւելի զարգացած անդամներ, քան թէ տալիս է այժմ։ Այն տեսակ դպրոցներում, ուր անխտիր իրաւունք ունեն ուսուցչութիւն անելու և միջնակարգ կամ բարձրագոյն դպրոցներից աւարտած անձինք և այնպիսիները, որոնք միայն մի քանի տարի են նստել աշակերտական նստարանի վրա, միշտ անպակաս կը լինեն խառնակութիւններ և խռովութիւններ, որովհետև այդ տեսակ ուսուցիչների մէջ մանկավարժական, դաստիարակչական և դպրոցական ոչ մի խնդրի վերաբերմամբ համաձայնութիւն չէ կարող կայանալ և համերաշխութիւն չէ կարող լինել, որից պէտք է խուսափել։

Կարող կը լինէ արդեօք թեմ. դպրոցի հոգաբարձութիւնը բաւականութիւն տալ հասարակութեան սպասելիքներին և արդարացնել իր վրա դրված յոյսերը, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան։

Փող. Զաքարեան

II

Շուշի, 1 օգոստոսի

Ինչպէս յերաւի ընթերցողը գիտէ, Շուշու թեմական դպրոցի տեսուչ բժ. Նիկ. Նարամիշեանը հրաժարվել է, և հոգաբարձութիւնը որոնում է նոր տեսուչ։ Լսում ենք, որ դրվում են մի քանի անձանց թեկնածութիւնները։ Թէ ինչպիսի վիճակ է խոստանում թեմական դպրոցին, եթէ այդ առաջարկված թեկնածուներից մէկն ու մէկը ստանձնելու լինի դպրոցի տեսչի բարձր պաշտօնը, այդ առիթով աւելորդ ենք համարում խօսել, որովհետև նրանց դրօշակները ամենքին էլ լաւ յայտնի են...

Բայց միևնոյն ժամանակ հաւաստի աղբիւրներից մի ուրախալի լուր ենք լսում, որ Ժընէվի համալսարանի նախկին պրիվատ դօցենտ Ղազար Տէր-Ղազարեանի թեկնածութիւնն է առաջադրվում Շուշու ինտելիգենցիայի կողմից։ Ղ. Տէր-Ղազարեանը անծանօթ անձնաւորութիւն չէ հայ ինտելիգենցիայի համար. բաւական է յիշել այն, որ նա թեմական դպրոցը աւարտելուց յետոյ աւարտել է Ժընէվի համալսարանը՝ ստանալով քիմիայի դօքտօրութեան աստիճան. նրա նոյն համալսարանում դասախօս լինելը, նրա խոշոր գիտական աշխատութիւնները եւրոպական մասնագիտական թերթերում, համառուսական բնագէտների ժողովները, ուր վերջին անգամ միաձայն քարտուղար էր ընտրել, նրա մի շարք լեզուների տիրապետելը, օրինակ՝ հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն, և այլն, և այլն՝ ուժեղ գրաւականներ են նրա լուրջ պատրաստութեան, և կօմենտարիաները աւելորդ կը լինեն, եթէ ասելու լինենք, որ ամենայարմարագոյն տեսչացուն կը համարվի Ղ. Տէր-Ղազարեանը։ Մի կատարեալ բաղդաւորութիւն կը լինի Տէր-Ղազարեանի տեսչութիւնը Ղարաբաղի թեմ. դպրոցի համար, որպիսի բաղդից թերևս զուրկ են մեր միւս թեմական դպրոցները։

Յոյս ունենք, որ հոգաբարձութիւնը, մի կողմ թողած պալիատիվները, որ առաջ պաշտօնի կը կոչէ Տէր-Ղազարեանին, վերաստեղծելով սեմինարիայի հին համբաւը, որից նա զրկված էր Լ. Սարգսեանի տեսչութիւնից հրաժարվելուց ի վեր։

Գր. Տէր-Աւետիքեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Արևահարութեան մի դէպք

Հին-Նախիջևան, 7 օգոստոսի

Օգոստոսի 5-ին, երեկոյեան ժամը 3-ին, աղահանքի կառավարիչ Իսմայէլ կ. Ջանփօլադեանցը արևի կիզիչ ճառագայթների տակ աղ կշռելու միջոցին արևահար է եղել։ Սա արևահարութեան առաջին դէպքն է, որ լսում ենք վերջին տարիներում։ Սոյնանման դէպքեր դարձեալ տեղի են ունեցել մեզանում մօտիկ անցեալում...

Աղահանքը կապալով վերցրած ունեն եղբարք Ջանփօլադեանցները։ Հանգուցեալ Իսմայէլը վերջինների հօրեղբօր որդիներից մէկն էր, 40 տարեկան, թողեց որբ ամուսին և զաւակներ։

Նոյն օրը, օգոստոսի 5-ին, ճաշի մօտերքին, վերջ դրեց իր չարքաշ կեանքին մօտ 70 տարեկան, Հին-Նախիջևանի հին սերնդի վերջին շառաւիղներից մէկը՝ Կոստանդ-աղա Իսահակեանցը, ընդունելով իր կնոջ և 5—6 տարեկան զաւակի ներկայութեամբ կարբոլեան թթւուտ։ Ինքնասպանութեան պատճառը եղել է նիւթական սուղ ու բարոյապէս ճնշված դրութիւնը։

Ա. Տ. Ստեփանոսեանց

Եպիսկ. ձեռնադրութիւնների նախօրեակին

Էջմիածին, 11 օգոստոսի

Թիւրքիայից եկել են եպիսկոպոսանալու Ռումինիայի առաջնորդ Գնէլ ծ. վարդապետ Գալէմքեարեանը, Արմաշի առաջնորդ և վերատեսուչ դպրեվանքի՝ Մեսրոպ ծ. վ. Նարոյեանը և Ադրիանուպոլսի առաջնորդ Ղևոնդ ծ. վարդ. Դուրեանը։ Գուցէ և այդ խմբին աւելանան Էջմիածնի միաբաններից մի քանիսը, որոնց մասին խօսվում է։

Սարսափելի երաշտ է մեզանում. ամսից աւել է, ինչ անձրև չենք տեսել։ Ջրի պակասութեան պատճառով ցորենը վատ եղաւ. տեղեր կան, որ բամբակը համարեա չորանում է։ Ջրհորների ջուրը անգամ զգալի պակասել է։ Ծառերի տերևները դեղնել և թափվում են, կարծէք թէ աշուն լինի։

Վ. ք. Աղազադեան

Կեանքի թանգութիւնը ամառանոցում

Հաջիքենդ (Գանձակի գաւ.), 10 օգ.

Ահա ամառվայ երեք ամենաշոգ ամիսները վերջանալու վրա են, բայց Հաջիքենդը մի անգամ անձրևի երես չը տեսաւ։ Շնորհիւ դրան՝ ջրերը սաստիկ պակասել են, նոյն իսկ շատ աղբիւրներ բոլորովին չորացել են, որի պատճառով Ներքին-Հաջիքենդում սաստիկ նեղվում են ջրից։

Այստեղ կենսական մթերքների սարսափելի թանգութիւն է տիրում, չը նայած որ մօտ գիւղօրայքից են բերում, բայց գները օր օրի բարձրանալու վրա են. օրինակ ոչխարի մսի փունտը 18 կոպ., տաւարինը՝ 12 կոպ., իւղինը (թարաքեամի)՝ 55—60 կ., պանիրինը՝ 27—30 կ., մեղրի փունտը 50 կ., մի զոյգ ձուն 5 կ., գետնախնձորի պուդը 80 կ.—1 ր., ածխի պուդը 1 ր., վաւիկը՝ 40 60 կ. հատը։ Եւ այդպէս էլ միւս բաները։

Նախկին տարիներում այստեղի ամառողները մեծ մասամբ բաղդաւորներ էին լինում, որոնց շռայլ ծախքերի շնորհիւ կենսական մթերքներն իրանց նորմալ գներից այս աստիճան բարձրացան։ Եւ այժմ՝ չը նայած որ նրանք այլևս չը կան, բայց գները չեն պակասում, այլ, ընդհակառակը, աւելանում են։

Ի՞նչ կարող են անել այժմ չինօվնիկները, որոնք Հաջիքենդի մի ստուար մասն են կազմում և որոնք ստիպված՝ պէտք է այստեղ ապրեն ամբողջ ամառը։

Հիւրանոցներն էլ իրանց հերթին պակաս չեն աւելացրել գները. 3-4 րուբլուց պակաս սենեակ չէք կարող գտնել, այն էլ անունն է սենեակ. երկու աքաղաղ ազատ կռուել չեն կարող, այնքան փոքր է։

Կառապանների համար չը նայած որ սակագին է նշանակված՝ Գանձակից Հաջիքենդ, և այստեղից Գանձակ, բայց անունն ենք միայն լսել։ Ո՞վ կը համարձակվի կառապանին սակագնով վճարել. «Սակագինը ֆօրմի համար է», ասում են կառապանները։

Ահա այսպէս է Հաջիքենդի այժմեան ամառողների դրութիւնը։ Եթէ այսպէս շարունակվի մի երկու տարի ևս, շատ հաւանական է, որ այստեղ դրսից եկողներ բոլորովին չեն լինի։

Սիւնեցի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄ. ԴՊՐՈՑԻ 75-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

II

Շուշի, 12 օգոստոսի

Յոբելեանի նախատօնակը, ինչպէս գիտենք, կատարվեց օգոստոսի 4-ին Գանձասարի երբեմն կաթողիկոսանիստ վանքում, ուր գտնվում է դպրոցի հիմնադիր Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալեանի շիրիմը։

Շաբաթ, օգոստոսի 10-ին, Շուշում սկսվեց տօնախմբութիւնը։

Այդ օրը, վաղ առաւօտից, ժողովուրդը դուրս եկաւ մէյդանը և ապա սկսեց ուղղվել դէպի առաջնորդարանին կից դպրոցի նախկին բնակարանը, որից մի քիչ հեռու գտնվում է այժմեան շէնքը։ Բոլոր կրպակները և մագազինները փակվեցին։ Դպրոցի երկու շէնքերը, առաջնորդարանը և փողոցը զարդարված էին դրօշակներով, դափնիներով և երկու փողոցների մուտքում կանգնեցված էր յաղթական կամար։ Առաւօտեան ժամը 9-ին արդէն ահագին բազմութիւն էր խռնված առաջնորդարանի առաջ, երբ Զաւէն և Բաբգէն վարդապետները, թեմից եկած քահանաները, պատգամաւորները խումբ խումբ դիմեցին դէպի Ագուլեաց մայր եկեղեցին։ Եկեղեցիների զանգակները սկսեցին ղօղանջել։ Ճանապարհին ժողովուրդը, միանալով երթին, ստուարանում էր։ Մայր եկեղեցին լցվեց ամբողջովին. սկսվեց պատարագը. երգում էր հայոց դպրոցների քառաձայն խումբը, Դէմուրեանի խմբապետութեամբ։ Համքարները իրանց դրօշակներով շարվել էին եկեղեցու բակում։ Պատարագից յետոյ կատարվեց հոգեհանգիստ դպրոցի հանգուցեալ բարերարների, հոգաբարձուների, տեսուչների, ուսուցիչների և սաների յիշատակին, որից յետոյ եկեղեցական հանդէսը՝ համքարների և ժողովրդի հետ միասին ուղևորվեց հայոց հին հանգստարանը, ուր կատարվեց հոգեհանգիստ Բաղդասար միտրոպոլիտի հօր՝ նահատակված Դանիէլ-բէկ Հասան-Ջալալեանի գերեզմանի վրա («Մշակի» № 176-ում տպված հեռագրի մէջ, սխալմամբ «հօր» բառը թողնված է)։

Հին հանգստարանից արդէն եկեղեցական հանդէսը սկսեց թափօրով, շարականների երգեցողութեամբ գնալ Բաղդասար միտրոպոլիտի բնակարանը (դպրոցի հին շէնքը), որի լայն բակում պէտք է կատարվէր յոբելեանը բացօթեայ, որովհետև հազարաւոր երկսեռ ժողովուրդը չէր կարող զետեղվել որևէ շինութեան մէջ։ Դպրոցի բակի առաջ ձգվում է նաև մի մեծ պարտէզ, որ յատկացված էր դպրոցների սաներին և երաժշտական ու երգեցիկ խմբերին։ Այդտեղ, դպրոցի հին շէնքի վերին յարկում գտնվող մի փոքր սենեակի առաջ, ուր ապրում էր Բաղդասար միտրոպոլիտը, կատարվեց հոգեհանգիստ նրա յիշատակին, որից յետոյ Բաբգէն վարդապետը, ճառախօսների և ընթերցումների համար շինված բարձրաւանդակ ամբիոնից խօսեց ոչ թէ մի քարոզ, այլ մի առենաբանութիւն, որի նպատակն էր ծանօթացնել ժողովրդին դպրոցի հիմնադիր Բաղդասար միտրոպոլիտի կենսագրութեան, գործունէութեան և դպրոցի հիմնարկութեան պատմութեան հետ։ Պէտք է ասել, որ միտրոպոլիտը վախճանված լինելով 1858 թ., նրան ժամանակակից սերունդը, որ ի մօտոյ ծանօթ էր նրա գործունէութեան և մանաւանդ նրա բազմաթիւ անէկդօտների, ասացուածների հետ, գրեթէ այլ ևս չը կայ. նոր սերունդները շատ քիչ բան գիտեն նրա և դպրոցի հիմնադրութեան պարագաների մասին։ Այդ պակասը պէտք է լրացնէր այն պատմութիւնը, որ յանձնվել էր գրելու պ. Լէօին, բայց սրա պախարակելի անպարտաճանաչութիւնը զրկեց ժողովուրդը և զանազան տեղերից եկած պատգամաւորներին այդ անհրաժեշտ հաճոյքից և առաջ բերեց մեծ դժգոհութիւն հանդիսականների մէջ, որովհետև յոբել. յանձնաժ. չէր հոգացել գոնէ մի համառօտ կենսագրական բրօշիւր տպել և տարածել։ Այդ կողմից շատերին մեծ գոհութիւն պատճառեց «Մշակի» № 174-ում տպված Պետրոս ք. Տէր-Յովհաննիսեանի բանասիրականը, որ այդ յոբելեանական օրերում եղաւ միակ աղբիւրը տեղեկութիւնների՝ դպրոցի պատմութեան և նրա հիմնադրի կենսագրութեան մասին։ Այդ տեսակէտից, Բաբգէն վարդապետի երկու առենաբանութիւնները՝ Գանձասարում օգոստոսի 4-ին և այժմ դպրոցի բակում՝ առանձին նշանակութիւն ստացան։

Այդ առենաբանութիւնից յետոյ, առաջ եկան Շուշի քաղաքի թուրք ժողովրդի հոգևորական և աշխարհական ներկայացուցիչները. 1) ղաւառային ղազի՝ հաջի մօլլա Հուսէյն Հակի Օրուջ-զադէ, 2) Փիշնամազ Ախունդ-աղա Աբդիւրրահիմ Մուշթայիդ-զադէ և 3) մի քանի բէգեր ու վաճառականներ։ Ղազին, դիմելով Զաւէն վարդապետին և հայ ժողովրդին, արտայայտեց մահմեդական հոգևորականութեան և թուրք ժողովրդի խնդակցութիւնը և ջերմ բարեմաղթութիւնները՝ հայ ժողովրդի այդ մեծ տօնի առիթով, շնորհակալութիւն յայտնեց, որ հայ եղբայրները չեն մոռացել իրանց թուրք եղբայրներին ևս հրաւիրելու ուսման և կրթութեան այդ տօնին, և ցաւ յայտնեց, որ իրանց կրօնական մեծ սուգի պատճառով (օգոստոսի 10-ին և 11-ին շիա մահմեդականների մեծ սուգի օրերն էին)՝ չեն կարող մասնակցել վաղվայ թափօրին և բանկէտին։ Ապա Փիշնամազը արաբերէն հոգեհանգիստ կատարեց Բաղդասար մեծ խալիֆայի յիշատակին, որի անունը, ասաց նա,—անջնջելի է մնացել և թուրք ժողովրդի մէջ։ Հոգեհանգստից յետոյ Փիշնամազ աղա Աբդիւրրահիմը արտասանեց մի ճառ, խիստ համակրական՝ հայերի ուսումնասիրութեան և կրթասիրութեան մասին, և իղձ ու փափագ յայտնեց, որ Շուշի քաղաքի II մասն ևս (թուրքերի մասը) իր I մասից օրինակ առնի և կրթութիւնն ու գիտութիւնը տարածի իր մէջ։

Զաւէն վարդապետ յանուն հայ հոգևորականութեան և ժողովրդի շնորհակալութիւն յայտնեց մուսուլման եղբայրների արտայայտած համակրութեան և բարեմաղթութիւնների համար։

Հանդէսը փակվեց։

Երեկոյեան, ժամը 9-ին, թեմական դպրոցի ընդարձակ դահլիճում տեղի ունեցաւ հոգևոր համերգ յոբելեանի առիթով, ղեկավարութեամբ Մոսկվայից եկած երաժշտագէտ շուշեցի Եղիշէ Բաղդասարեանի, մասնակցութեամբ Նոր-Նախիջևանից եկած օր. Ս. Ակսայցեանի և Ս. Մուրադեանի և տեղական նորակազմ սիրողների քառաձայն երգեցիկ խմբի։ Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր։ Այդ հոգևոր-համերգը, ինչպէս և երկրորդ օրը օգոստոսի 11-ին տրված երեկոյթ-ներկայացումը համերգային բաժնով անցաւ շատ աջող։ Հասարակութիւնը երկու անգամին ևս արժանացրեց բուռն ծափահարութիւնների երաժշտագէտ Ե. Բաղդասարեանին, որ հանդիսացաւ մի լուրջ, պատրաստված և հմուտ ղեկավար, օր. Ակսայցեանին, որի սօպրանօ ձայնը բոլոր րէգիստրներում հնչում էր ախորժալուր և գրաւիչ, և Ս. Մուրադեանին, որի բասսօ ձայնը նոյնպէս ունի տեմբրատիվ գրաւչութիւն։

Երգերի մէջ, մուզիկայի ընկերակցութեամբ մեծ փուրոր հանեց երկու քահանաների «Տէր, զի բազում եղեն նեղիչք իմ և բազումք յարեան ի վերայ իմ» սաղմոսը։ Երգվեցին մի քանի երգեր, երաժշտական հեղ. իրա Ե. Բաղդասարեանի, Մ. Եկմալեանի պատարագից և այլն։

III

Յոբելեանական բուն հանդէսը, որի համառօտ նկարագրութիւնը հաղորդվեց «Մշակին» հեռագրով, կատարվեց կիրակի, օգոստոսի 11-ին։

Այդ հանդէսը, որ ստացաւ գրանդիօզ և լայն ժողովրդական բնաւորութիւն, սկսվեց առաւօտեան ժամը 9-ին և իր զանազան բաժիններով—եկեղեցական թափօր, պատարագ, գոհաբանական մաղթանքներ, բուն յոբելեանական հանդէսը, ընթերցումներ, առենաբանութիւններ, շնորհաւորութիւններ, երգեցողութիւն, բանկէտ, երեկոյթ, համերգ—աւարտվեց գիշերվայ ժամը 1-ին։ Եւ ամբողջ ժամանակ, բացօթեայ, արևի կիզիչ ճառագայթների ներքոյ խռնված հայ ժողովուրդը լարված ուշադրութեամբ լսում էր ճառախօսներին, դղրդացնում օդը իր որոտընդոստ ծափահարութիւններով և կեցցէներով։

Առաւօտեան ժամը 10-ին եկեղեցական ժողովրդական մեծ թափօրը համքարների հետ միասին և երաժշտական նուագածութեամբ՝ դիմեց Ղազանչեցոց մեծ եկեղեցին, ուր սինօդի անդամ Բաբգէն վարդապետի կատարած պատարագից յետոյ՝ տեղի ունեցաւ, մասնակցութեամբ Ղարաբաղի թեմից եկած բազմաթիւ գործակալների և քահանաների, հանդիսաւոր Կայսերական և Հայրապետական մաղթանք, որից յետոյ նոյն հանդիսաւոր թափօրով հազարաւոր ժողովրդի հետ վերադարձանք ամենքս դպրոց, որի բակում և պարտէզում պէտք է կատարվէր հանդէսը։ Այդտեղ «Էջմիածին ի Հօրէ» շարականը երգելով, Զաւէն վարդապետ իր որոտընդոստ ձայնով կարդաց Վեհ. Կաթողիկոսի յոբելեանի բացման կոնդակը, որով իր Հայրապետական օրհնութիւնն էր ուղարկում դպրոցի հոգաբարձութեանը, յոբելեանական յանձնաժողովին, ուսուցիչներին, աշակերտներին և Ղարաբաղի ամբողջ ժողովրդին։ Պատշաճ օրհնութիւնից յետոյ, Բաբգէն վարդապետ մի նոր առենաբանութիւն կատարեց կոնդակի առիթով և ապա կարդաց Վեհ. Կաթողիկոսի երկրորդ կոնդակը, որ վերաբերում է դպրոցի ապահովութեանը։ Այդ կոնդակը հարկ ենք համարում առաջ բերել։

⁂

Կոնդակ Ամենայն Հայոց Կաթողիկոսի

(Բաղդ. Արղութեանի նուիրաբերութեան առիթով)

Ընկալեալ Մեր զգրութիւն գերամեծար պ. Բաղդասարայ Արղութեանց շուշեցւոյ ի 29 մայիսի տարւոյս և զտեղեկագիր անդամոյ սինօդի ս. Էջմիածնի տէր Բաբգէն և ժամանակաւոր կառավարչին թեմի հայոց տէր Զաւէն վարդապետաց բերկրութեամբ սրտի և հոգեկան մխիթարութեամբ իրազեկ եղաք, զի յարգելի պ. Բաղդասար Արղութեանց նուիրաբերէ զերկերիւր 1000 րուբլիս, որպէս դրամագլուխ անձեռնմխելի, յանուն և ի յիշատակ իւր, յօգուտ և ի բարգաւաճումն թեմական հոգևոր դպրանոցին հայոց Ղարաբաղի, որոյ 75-ամեայ յո-

ՇԱՄՇԱԴԻՆԻ ՑԱՒԵՐԻՑ

I

Կրթական գործը մեզանում

Անշուշտ շատ անգամ է հնչել հայ ընթերցողի ականջին Շամշադինի անունը: Դա այնքան էլ անծանօթ չէ ձեզ. Ղազախի գաւառի խուլ անկիւններից մէկն է դա, որը ներկայացնում է դառնութիւններով, ցաւերով լեցուն տառապանքի իսկական աշխարհ, որտեղ ապրում են կծկված, հարստահարված մի բուռն հայեր: Անընդհատ գրվել է այդ անկեան մասին, նոյն իսկ այժմ յաճախ լսվում է այդ անունը մեր թերթերի էջերում: Շատ անգամ է գրվել, բայց ցաւօք սրտի պիտի ասել, որ այդ բոլոր գրութիւններն էլ եղել են տխուր, անմխիթար, բոլորն էլ ունեցել են ցաւոտ շեշտ, մանաւանդ այս վերջին տասնամեակում: Որքա՜ն դառն արկածներ, սարսափելի պատմութիւններ, չը տեսնված երևոյթներ են տեղի ունենում տեղիս հայ գիւղացիութեան մէջ:

Նկատելով այժմեան մեր գիւղացիութեան անմխիթար կեանքը, միևնոյն ժամանակ նրա աղէտաբեր հետևանքները, բարոյական պարտքս եմ համարում ծանօթացնել հայ ընթերցողին Շամշադինի գիւղացիութեան, նրա տնտեսական վիճակի, նրա կրթական գործի, նրա վարք ու բարքի հետ և այլ չը տեսնված՝ տեղի ունեցող երևոյթների հետ, որոնք Շամշադինի գիւղացիութեան բացասական և կատարեալ կործանիչ կողմերն են ցոյց տալիս միանգամայն: Բայց որովհետև այժմ համարեա ամենահրատապ խնդիրներից մէկը «դպրոցական խնդիրը», այլապէս ասած «կրթական գործը» կարելի է համարել, մի կողմ թողնելով միւս խնդիրները, որոնց մասին կը խօսենք մի այլ անգամ, առ այժմ գրելիք նիւթ կը ծառայէ մեզ «կրթական գործը Շամշադինում»:

Ի՞նչ է ներկայացնում Շամշադինի հայերի կրթական գործը: Հարցիս պատասխանը շատ անմխիթարական է: Կրթական գործն այստեղ ընդհանրապէս աննախանձելի, վատթար վիճակի մէջ է եղել մինչև այժմ:

Թէև պիտի ասել, որ այստեղի հայ ժողովուրդը դեռ շատ վաղուց է զգացել դպրոցի ահագին նշանակութիւնը, կրթութեան խիստ անհրաժեշտութիւնը, տարածել լուսաւորութիւն, պատրաստել ապագայ կրթված սերունդ, բայց այդ բոլորն էլ անցել են գրեթէ անօգուտ, ապարդիւն: Ինչո՞ւ:

Որովհետև դպրոցի, կրթութեան նշանակութիւնը հասկացող, լուսաւորութիւն տարածող մարդկանց թիւը եղել է այնքան քիչ, որ նրանց ձայնը արձագանք չի գտել տգիտութեան թանձր խաւարի մէջ խարխափող գիւղացու խուլ ականջներում: Մենք կը դժուարանանք մատնանիշ անել մի գիւղ, որ մի քանի տարի շարունակ ունեցած լինի կանոնաւոր դպրոց, որտեղ ուսումն աւանդվէր լրիւ ամբողջ տարվայ ընթացքում: Դրանց դրութիւնն էլ միշտ եղել է անմխիթարական, որովհետև այստեղ ոչ մի դպրոց տնտեսապէս ապահովված չէ, որովհետև ուսումն. տարվայ ընթացքում գիւղացիները իրանց ամեն մի չնչին դժգոհութիւնների պատճառով արգելել են երեխաներին դպրոց յաճախել. և վերջապէս դպրոցի անկանոն, խախուտ լինելուն նպաստել է և այն հանգամանքը, որ այստեղ ժողովուրդը միշտ էլ կրաւորական դիրքի մէջ է եղել: Համարձակվում էք խօսել դպրոցի սեփական շէնք ունենալու մասին, նա խոկոյն իր դարդերը կը պատմի ձեզ, դժգոհ միանգամայն իր վիճակից: Մարդ դժուարանում է ցոյց տալ մի գիւղ, որ ունենայ սեփական դպրոցի շէնք. համարեա բոլոր գիւղերում դպրոցը եղել է մի որևէ գիւղացու խարխուլ սենեակներում: Բացառութիւն է կազմում միայն Թօուզ գիւղի ծխ. դպրոցը: Սակայն մի՞թէ ամբողջ 10 - 12 գիւղերից ոչ մէկը չը կարողացաւ մի սեփական դպրոցի շէնք ունենալ: Գուցէ տնտեսապէս անբաւարար վիճակի մէջ են գտնվում: Դժբաղդաբար կան այնպիսի գիւղեր, որոնք տնտեսապէս շատ անբաւարար վիճակի մէջ են. Բաշքեանդ, Ղուլալի, Ղըղի, Բերդ, Կարմիր-Աղբիւր և այլն գիւղերը, որոնց բնակչութեան մեծագոյն մասը կազմում են հարուստներ, կեղեքիչ վաշխառուներ: Մի՞թէ սրանք չեն կարող իրանց ունեցած կարողութեան մի չնչին գումարը յատկացնել դպրոց հիմնելու, իբրև բարոյական վարձատրութիւն ապագայ մատաղ սերնդին: Ամենայուսահատականն այն է, որ կան մի քանի գիւղեր, որտեղ դպրոց ասած բանը գոյութիւն չունի. Զորեթան, Վերին Ճամբարակ, Մովսէս և այլն գիւղեր, որտեղ ոչ մի դպրոց, ոչ մի կրթական հիմնարկութիւն չը կայ:

Սակայն մինչև ե՞րբ պիտի Շամշադինի ժողովուրդը մնայ տգիտութեան խաւարի մէջ ընկղմված, մինչև ե՞րբ պիտի տևի այս անտանելի, վրդովեցուցիչ կացութիւնը:

Ընդունելով այն անհերքելի ճշմարտութիւնը, որ ներկայ անելանելի կացութիւնից տգէտ գիւղացուն կարող է ազատել միայն դպրոցը, կրթութիւնը, որով ծաղկում է հայ մանուկը, որպէս նորակոկոն վարդ, ցանկալի է, որ դուրս գային ձեռնհաս մարդիկ և աջակցէին տգէտ գիւղացուն՝ դպրոցներ բանալ:

Ի հարկէ, այդ պարտականութիւնը աւելի շատ ընկնում է հայ գիւղացու գիտակից տարրի վրա, մանաւանդ գիւղական ուսուցիչների և քահանաների վրա, որոնք օժտված իրանց գիտական պատրաստութեամբ՝ պէտք է նպաստեն գիւղական դպրոցի կրթականի բարձրացմանը: Ուսուցիչներն են, որոնք առաջնորդ են հանդիսանում գիւղական հասարակական գործերի, ուսուցիչներն են, որ պէտք է բաւարարութիւն տան գիւղացու հոգեկան պահանջներին:

Սակայն տեսնենք Շամշադինում կա՞ն այնպիսի բարեխիղճ ուսուցիչներ ու քահանաներ, որոնք նպաստեն ժողովրդի մտքի լուսաւորմանը:

Ի նկատի ունենալով մեր այստեղի այժմեան ուսուցիչներին ու քահանաներին, գալիս ենք այն եզրակացութեան, որ այժմեան ուսուցիչներն ու քահանաները նոյն իսկ միջնակարգ կրթութիւն չունենալով չեն կարող առաջնորդ հանդիսանալ ժողովրդի մտքի լուսաւորման: Այստեղ չը կան եռանդուն ուսուցիչներ ու քահանաներ: Բոլորն էլ համարեա տգէտներ և թերուսներ են, որոնք ոչ մի դիրք և ոչ մի հեղինակութիւն չունեն ժողովրդի մէջ, չունեն ոչ մի բարոյական ոյժ, նոյն իսկ բացակայում է հասարակ յարգանքը: Բազմիցս անգամ առիթ եմ ունեցել շրջել մի քանի գիւղեր, յատկապէս տեղեկանալու, թէ ի՞նչպէս են ուսուցիչները պարապում աշակերտների հետ:

Ամեն տեղ համարեա դժգոհութիւն են յայտնում, ասելով թէ եղել են դէպքեր, երբ ուսուցիչը պատճառաբանել է, թէ ինքը սաստիկ հիւանդ է, մինչդեռ աշակերտը հեռանալուց յետոյ ուսուցիչը կամ իր գործն է կատարելիս եղել կամ ձուկ է որսացել գետերի ափերին: Ցաւալի իրականութիւն: Տեսէք ինչպիսի ուսուցիչներ են «օջախի լուսաւոր ջահը» դարձած:

Ընդամենը 20 օր ժամանակամիջոց կայ, որից յետոյ մեր բոլոր հայկական գաւառներում դպրոցները վերսկսվելու են: Սակայն հետաքրքրական է իմանալ, թէ Շամշադինի ժողովուրդը ի՞նչպիսի նորութիւններով է դիմաւորելու իր դպրոցների բացումը: Մտածե՞լ է արդեօք նրանց մասին, նրանց տնտեսական վիճակի մասին, նոր սեփական շէնք ունենալու մասին, թէ՞ դարձեալ պիտի ընթանայ նոյն շաւղով, որպիսով ընթացել է անցեալ տարիներում:

Ահա Շամշադինի հայերի «կրթական գործի» համառօտ տեսութիւնը՝ իր ցաւերով ու տառապանքներով: Շամշադինը միևնոյն ժամանակ մի անկիւն է, որը պատրաստված գործչի համար կարիքներով լի ասպարէզ է ներկայացնում:

Թող առաջ գան մեր գիտակից հասարակութիւնից եռանդուն, գործին նուիրված գործիչներ և լուսաւորեն տգէտ գիւղացու մշուշով պատած վառ ապագայի մատաղ փարոսը...

Հարկաւ որոշ խոչընդոտների կը հանդիպեն՝ շնորհիւ տգէտ գիւղացիութեան, սակայն կամքի տոկունութիւնը կայանում է նրանում, որ ամեն մի արգելառիթ հանգամանքները յաղթահարելով՝ առաջ տանեն իրանց միսիան, ի նպաստ կուլտուրայի:

Թող գան:

Լեոն Ա. Բաբայեան

Ղզըղի (Շամշադին), 10 օգոստ.

ԽՈՏԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏՈՒՄ

Նոր-Բայազէտ, 9 օգոստոսի

Անցեալ անգամ գրել էի, որ այս տարի խոտի բերքը շատ աննշան էր մեզանում, և ցոյց էի տուել նրա գների բարձրացումը:

Խոտը, իբրև անասունների պաշար, մեծ դեր ունի կատարելու ժողովրդական տնտեսութեան մէջ, ուստի այդ մթերքը այժմ ամենահետաքրքրական առարկան է դառել մեր հասարակութեան համար, իբրև մի ժողովրդի, որը բացառապէս պարապում է անասնապահութեամբ և հողագործութեամբ:

Սակայն մեր ժողովրդի տնտեսութիւնը այս տարի չը բաւարարվեց խոտի արդիւնաբերութեան վերաբերմամբ, մինչդեռ նախկին տարիներում բացի իր անասունների պաշարը պատրաստելուց մի աւելորդ բաժին ունենում էր նաև ծախելու համար, և դա մի մեծ նեցուկ էր նրա տնտեսութիւնը վերականգնելու համար:

Իմ հաւաքած տեղեկութիւնները միշտ ցոյց են տուել, որ ամեն տարի մեր քաղաքի հասարակութեան մեծամասնութիւնը 50 հազար րուբլու խոտ է ծախել տարեկան. օրինակ 1,600 ընտանիքից մի կողմ թողնելով 400 ընտանիքը, որոնք խոտի պաշար չունենան ծախելու համար, իսկ մնացեալ 1200 տունը անխտիր ունեն 5-ական սայլ (միջին թւով) ծախելու բաժին, որը գնահատելով սայլը 8 րուբլի կը ստացվի 50 հազար ր. (1200×5=6000 սայլ, 8 ր. գնահատելով՝ 48,000 ր.), մի գումար, որը գալիս էր ծածկելու մեր ժողովրդի առօրեայ պահանջների մի մասը և հայթայթելու նրա ընտանեկան անհրաժեշտ կարիքները: Իսկ այս տարվայ չնչին խոտարդիւնաբերութեամբ մեր ժողովրդի մեծամասնութիւնը զրկված է այդ խոշոր գումարից, որ նրան հայթայթում էր «չօղար» (անասնավաճառ) դասակարգը, որի անդամներից շատերը ունենալով 3—400-ական տաւարներ, այժմվանից արդէն շտապում են որքան կարելի է շուտով քշել և մեծ վաճառանոցներում ծախելով «սաղ անել», երկիւղ կրելով խոտի բարձր գներից, որպիսի գներով նրանք անկարող են խոտ գնել և իրանց անասունները պահպանել մինչև Բարեկենդանի օրերը, ինչպէս սովորաբար արել են այդ ամեն տարի:

Խոտի անբերրիութեանը այս տարի նպաստեց երկարատև երաշտը, երբ զգալի կերպով տիրեց յունիս ամսում, իսկ մեզանում խոտը աճում է այդ իսկ ամսում, երբ երկինքը պպղում էր իր կապտութեամբ: Փորձերը ակներև դարձան այդ դէպքում, երբ մի քանի խոտատեղեր ջրվեցին հեղեղների ջրերով և բաւարար արդիւնք տուին: Բայց այդպիսի խոտատեղերը մատների վրա են համարվում մեզանում, այն ինչ ամբողջ խոտահարքը դատապարտված է երկնքի քմահաճոյքին:

Խոտի աճեցողութեանը մասամբ խանգարեցին քաղաքիս անասնապահները, որոնք բոլոր մայիս ամսում անխնայաբար արածացնում էին դաշտերում և խոտահարքում, վնասելով այդպիսով ամբողջ բուսականութեանը:

Խոտից յետոյ տեսնենք ի՞նչ կը տայ հացի արդիւնաբերութիւնը, որի հունձը արդէն սկսված է:

Գ. Սիմոնեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի նահանգի այգեգործների և գինեգործների կօմիտէտը օգոստոսի 13-ի իր նիստում որոշել է շարունակել Կախէթիայի և Բօրչալուի գաւառներում խաղողի հիւանդութիւնների հետազօտութիւնները:

◆ Թիֆլիս է վերադարձել այն մասնագէտների յանձնաժողովը, որ գնացել էր Գանձակի նահանգը գիւղատնտեսական փորձադաշտերի տեղը ընտրելու նպատակով դիտելու թէ արքունական և թէ մասնաւոր սեփականատէրերի կալուածները: Եղել են Ջիվանշիրի գաւառում, Արէշի գաւառում, դիտել են ի. Շ. Փիրումովի, Սւան-Իբրաշեանի, Սաֆրազեանի և ուրիշ բէգերի հողերը: Ամենուրեք յանձնաժողովի ուշադրութիւնը գրաւել է ջրի պակասութիւնը:

◆ «Թիֆլիսի կրուժօկի» աւագները քաղաքագլխի հետ միասին օգոստոսի 14-ին ներկայացան Կովկասի փոխարքայի պաշտօնակատար ինֆանտերիայի գեներալ Ն. Պ. Շատիլովին և խնդրեցին հաստատել կրուժօկի ձմերային քաղաքապատկան շէնքի վերաշինութեան նախագիծը այն ձևով, ինչ ձևով որ հաստատել է նահանգական վարչութեան շինարարական բաժանմունքը:

◆ Ինչպէս լսում ենք, «Թիֆլիսի Կրուժօկի» միջնորդութիւնը՝ կրուժօկի շէնքի վերաշինութեան նախագիծը հաստատելու մասին, յարգված է Կովկասի փոխարքայի պաշտօնակատար գեն. Շատիլովի կողմից:

◆ Հ. Առաքելեան, որ գնացել էր Շուշի մասնակցելու Թեմական դպրոցի յօբելեանական հանդէսներին, ամսիս 15-ին առաւօտեան գնացքով վերադարձաւ Թիֆլիս:

◆ Քաղաքային վարչութեան անդամ իշխ. Ն. Ե. Արղութեան-Երկայնաբազուկը պատրաստվում է ներկայացնել վարչութեանը մի նախագիծ Մաղաթեան կղզու հիւսիսային մասը երկար պատով ամրացնելու համար: Այդպիսով կարելով Նիկօլայեվեան առաջին կամուրջից վերև Կուր գետի ճիւղը, քաղաքը ստանում է ընդարձակ տարածութեամբ հող գետի աջ ափում:

◆ Քաղաքային վարչութիւնը կարգադրել է 2-րդ քաղաքամասի տեխնիկին ստուգել Երևանեան հրապարակի վրա Թամամշեան ժառանգների քարվանսարայի վերաշինութեան աշխատանքները և, եթէ հաստատված նախագծից դուրս որևէ շեղումն կը նկատեն, իսկոյն դադարեցնել աշխատանքները:

◆ Թիֆլիսի Հայոց Դրամատիկական Ընկերութեան խորհուրդը և Հայկական Դրամատիկ խմբակցութեան վարչութիւնը որոշել են ամբողջ կազմով ներկայ լինել յայտնի գործիչ Գէորգ Բարխուդարեանի թաղման հանդէսին:

◆ Վերայի քաղաքային այգու կապալառու Լօլաձէն խնդրել է քաղ. վարչութեանը կամ խճուղի շինել Վերայի կամուրջից դէպի այգին և կամ սալայատակել ճանապարհը: Ինչպէս լսում ենք, խճուղին արդէն շինվում է և գիշերները կամուրջից սկսած մինչև այգին էլեկտրական լապտերներով լուսաւորվում է:

◆ Օգոստոսի 13-ին Նիկօլայեվսկայա փողոցի վրա ապրող 40 տարեկան Մարիա Չերկաշինային անզգայ դրութեան մէջ տարել են Միքայէլեան հիւանդանոցը: Բժիշկը գտել է, որ Չերկաշինեան թունաւորված է մօրֆիով: Նրա կեանքին վտանգ է սպառնում:

◆ Զինւորական բժիշկ Վ. Վ. Կլըխաշվիլին յայտնել է ոստիկանութեանը, որ իր տնից գողացել են փողի 2 քսակ՝ փողերով: Յետոյ բժիշկը յայտնել է նորից, որ 2 քսակներն էլ փողերով նա գտել է բարձի երեսում կարված:

◆ Օգոստոսի 14-ին Նիկօլայեվսկայա փողոցի № 14 տանը ապրող Թիֆլիսի քաղաքացի Գէորգ Անդրէյեվիչ Լազարեվը յայտնել է ոստիկանութեանը, որ օգոստոսի 7—12-ը լինելով ամարանոցում, անյայտ անձինք մտել են իր բնակարանը և գողացել 824 րուբլու արժողութեամբ ոսկեղէն և արծաթեղէն իրեր: Կասկած է յայտնել, որ գողութիւնը կատարել են Տամբովի նահանգի Սօկօլօ գիւղի բնակիչ Եակով Տիմօֆէյեվիչ Պլակսինը և Գօրու գաւառի Ախալքալաք գիւղացի Սերգէյ Ծղալօբօվիչ Տխոտանօվը, որոնց արդէն կալանաւորել է 8-րդ ոստիկանամասի պրիստաւը:

◆ Օգոստոսի 15-ին, ցերեկվայ ժամը 2-ին Թիֆլիսի տղայոց 3-րդ գիմնազիայի 5-րդ դասարանի աշակերտ Գէօրգի Կօնստանտինօվիչ Պօպօվը 17 տարեկան, որ ապրում էր իր ծնողների մօտ, Սապեօրնայա փողոց № 26 տանը, Կուր գետում, Վերայի պարոմից վերև լողանալիս, ընկնում է խոր տեղը և խեղդվում: Դիակը հանել են գետից:

◆ Թիֆլիսի նահանգի Ցխինվալի գիւղում ազնուական Անդրէյ Իլիօզօվը իր մօտ կանչելով փողոցից անցնող ակցիզի վերահսկիչ Դաւիթ Անանիէվին՝ ատրճանակի մի գնդակով ծանր վիրաւորել է նրան փորից:

◆ Թիֆլիսի քաղաքային աշխատանքի բօրսային յունիս ամսում դիմել են 341 աշխատանք որոնողներ, որոնցից 155 տղամարդ և 186 կին: Ըստ ազգութեան դրանցից ռուսներ 209, վրացի 47, հայ 39, օսեր 27, լեհ 11 և գերմանացի 8 հոգի, որոնցից գրագէտներ 188, անգրագէտ 153: Աշխատաւորների պահանջ եղել է 200 հոգուց, տղամարդու 67 և կնոջ 133: Յուլիս ամսում դիմել են 239 հոգի. տղամարդ 121 և կանայք 118, որոնցից ռուսներ 147, վրացիներ 33, հայեր 24, օսեր 19 և այլն: Դրանցից գրագէտներ 158, անգրագէտներ 81: Աշխատաւորների պահանջ եղել է 167, տղամարդու 62 և կնոջ 105. Աշխատանք որոնողների ամենամեծ մասը ազախիններն են, ապա՝ նեանկաներ և գօրնիչնեաներ, դռնապաններն ու պահապանները, լակէյներն ու շվէյցարները, խոհարարներն ու հասարակ բանւորները:

◆ Բաքւում հրատարակվող «Իկբալ» թերթը գրաշարների գործադուլի շնորհիւ տասն օր դադարելուց յետոյ վերսկսել է իր հրատարակութիւնը: Գործադուլարարների պահանջները չեն կատարվել և հների փոխարէն էլ վարձվել են նոր գրաշարներ:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ

Ռաշտ, 11 օգոստոսի

Ամսիս 6-ի երեկոյեան տեղիս Յորդանանեան դպրոցի թատերասրահում, նոյն դպրոցի հոգաբարձութեան խնդրանօք, դպրոցի օգտին պարսից սիրողների խումբը ներկայացրեց պարսկերէն լեզուով առաջին անգամ «Իբրաթ» կօմեդիան 4 գործ., հեղինակութիւն Միրզա Հասան-խանի: Խաղն անցաւ աջող. դերակատարները բոլորն էլ իրանց դերերումն էին: Հանդիսականների շարքում երևում էր և տեղիս դատաւոր [illegible] Մուաւաքար-ուլ-Դովլէն իր [illegible]: Իրանց բացակայութեամբ փայլում էին հայերը: Այդ հանգամանքը [illegible] հայերը [illegible] չեն եղել թատրոն, [illegible]:

Ի նկատի ունենալով ժամանակի այն հանգամանքը, որ ներկայացումը տրվում էր Յորդանանեան դպրոցի օգտին—«դպրոց» որի անձուկ և անմխիթար [illegible] բոլորին է յայտնի է—[illegible] պարսիկ [illegible] դպրոցի [illegible], որ մեր դպրոցի օգնութեան [illegible]:

Լեօ Ս.

ՄԱՄՈՒԼ

ՎՐԱՑ ՄԱՄՈՒԼԸ

«Սախալխո Գազեթի» լրագրի ամսիս 9-ի համարում տպված է «[illegible]» վերնագրով մի երկար ու լայն յօդված, որ վերաբերում է [illegible] քաղաքային ընտրութիւններին: Յօդվածագիրը բողոքում է այնտեղի հայերի [illegible] և դատապարտում նրանց բռնած ընթացքը, [illegible] գիրք, որ [illegible] վրացիներին [illegible] ընտրութիւններին [illegible], մի [illegible] վրացիների թիւը 800 է, իսկ հայերինը 400:

Մինչ չենք վիճում, [illegible] թէ այդ բողոքը հայերի վերաբեր-

բելեանն լրանայ յայժմ ամի: Բաց ընդունեալ նորա զկարիս և զբազմադիմի պէտս հոգևոր Թեմական դպրանոցին, զպահանջս ժամանակիս և զազգային-բարոյական պարտիս իւր, լիառատ սրտիւ արկանէ զլումայն իւր յանկապտելի գանձանակ ազգային յառաջդիմութեան և երջանկութեան մերոյ, որով յաւերժացուցանէ զբարի անուն և զյիշատակ իւր յէջս պատմութեան կրթական վերածնութեան հայոց Ղարաբաղի:

Օրհնեալ է անուն բարերարին Բաղդասարայ Արղումանեանց, որ ի կենդանութեան իւրում ի կատար ածէ զբարենպատակ կամս և զվճիռս իւր, արտայայտեալս ի կտակաւանդ գրութեան իւրում առ Մեզ, զորս վաւերացուցանեմք և հաստատեմք այսու հայրապետական կոնդակաւս Մերով, արձանագրելով զայնս ի սմին, ի հրահանգութիւն և ի գործադրութիւն հոգևոր Թեմական իշխանութեան և պատուարժան հոգաբարձութեան հոգևոր դպրանոցիդ, որպէս կտակ և սրբազան աւանդ բարերարին, բառ առ բառ.

«ա) Ես Շուշի քաղաքացի մօսկվաբնակ Բաղդասար Արղումանեանցս ի վաղուց աչքի առնելով Ղարաբաղի հայոց հոգևոր Թեմական դպրանոցի նիւթական անմխիթար վիճակը, որը վտանգ է սպառնում նրա ապագայ լուսաւոր յառաջադիմութեան, և կամենալով որ այդ պատկառելի հիմնարկութեան 75-ամեակը, որ լրանում է ներկայումս, գոնէ կարողանար նրան բարձրացնել նիւթապէս այնքան, որ նա կարենար մշտական և աւելի լայն տարածել իմ հայրենակից Ղարաբաղի խաւար ժողովրդի մէջ, ես Աստուծոյ օրհնութեամբ և յօժար կամքովս իմ միջոցներից նուիրաբերում եմ իմ ծննդավայր Ղարաբաղի Շուշի քաղաքի հայոց հոգևոր Թեմական դպրանոցին 200,000 րուբլի նրա ապահովութեան համար, որպիսի գումարը պէտք է ընդմիշտ մնայ անձեռնմխելի, իսկ տոկոսիքը իւրաքանչիւր տարի մտնում է նոյն դպրանոցի նախահաշուի մուտքի մէջ:

«բ) Վերոյիշեալ նուիրաբերածս 200,000 րուբլին դպրանոցի 75-ամեայ յօբելեանը կատարելու օրից, այն է ներկայ 1913—14 թ. ուսումնական տարվայ սկզբից, ես տալիս եմ ի սեփականութիւն Ղարաբաղի հայոց հոգևոր դպրանոցին՝ հետևեալ ձևով.

«1) Մինչև իմ մահը՝ ես Բաղդասար Արղումանեանցս վճարելու եմ իւրաքանչիւր տարի դպրանոցի հոգաբարձութեանը վերոյիշեալ մայր գումարի տոկոսիքը 5 տոկոսով, այն է 10,000 ր., իսկ իբրև ապահովութիւն նուիրաբերածս մայր գումարի՝ տալիս եմ դպրանոցին Մօսկվա քաղաքում գտնվող, աւելի խոշոր արժողութեամբ քան նուիրաբերածս գումարը, իմ մէկ տուն կալուածքը, որ գտնվում է Покровка, Частые Прудъ կոչված կենտրոնական քաղաքամասում 1046 քառակուսի սաժէն տարածութեամբ:

«2) Իմ մահվանից յետոյ իմ օրինական ժառանգները պարտաւոր են, ոչ ուշ քան երկու տարի, մայր գումար 200,000 րուբլին իր տոկոսներով կանխիկ դրամով, կամ նոյնիսկ գումարը արժեցող պետական արժեթղթերով մտցնել որևէ բանկային հաստատութիւն, համաձայնութեամբ Ամենայն Հայոց Հայրապետի, ազատելով վերոյիշեալ իմ անշարժ կալուածքը, իսկ եթէ վերոյիշեալ գումարը իմ օրինական ժառանգները երկու տարվայ ընթացքում իմ մահից յետոյ չը վճարեն, այդ դէպքում դպրանոցին իբրև ապահովութիւն թողած տուն-կալուածքս մնում է ընդմիշտ ի սեփականութիւն Ղարաբաղի հայոց հոգևոր դպրանոցի, որի արդիւնքով պահպանվում է դպրանոցը:

«3) Նաև ինձ եմ վերապահում իրաւունք իմ կենդանութեան ժամանակ ևս նուիրաբերածս 200,000 ր., իմ օրինական ժառանգներին պարտաւորեցրածս ձևով, մտցնել բանկային որևէ հաստատութիւն և իբրև ապահովութիւն թողած 1046 քառ. սաժէն տուն-կալուածքս ազատ համարել:

«գ) Մինչև իմ մահս՝ ես Բաղդասար Արղումանեանցս, իսկ իմ մահից յետոյ ազգականներիցս մէկը պէտք է լինի Թեմական դպրանոցի հոգաբարձական կազմի մէջ իբրև պատուաւոր հոգաբարձու: Այդ հոգաբարձուն պէտք է լինի հայ-լուսաւորչական, և նրա ընտրութեան իրաւունքը թողնվում է իմ ազգականներիս: Այդ պատուաւոր հոգաբարձուին իւրաքանչիւր տարի պէտք է ուղարկվեն դպրանոցի նախահաշիւը և տարեկան իսկական հաշիւները:

«դ) Դպրանոցի հոգաբարձութիւնը պարտաւոր է իմ ծննդավայր Զարգանաշէն (Վարանդա) գիւղի չքաւոր մանուկներից վիճակ ձգելով իւրաքանչիւր տարի ընդունել ձրիավարժ աշակերտներ երկու հոգի, իբրև որդեգիր իմ անուամբ:

«ե) Եթէ երբևիցէ և որևէ պատճառով յիշեալ դպրանոցը փակվելու լինի, նուիրածս անձեռնմխելի 200,000 րուբլին և կամ եթէ այդ գումարի փոխարէն մնացել է 1046 քառ. սաժէն կալուածքս Մօսկվայում՝ անցնում է սեփականութիւն Էջմիածնի և նոյնպէս միայն տոկոսները կամ արդիւնքը գործածվում են Ղարաբաղի որևէ ազգային եկեղեցական ուսումնական հաստատութեան վրա վերստին իմ՝ Բաղդասար Արղումանեանցիս յիշատակի յաւերժացման համար, ազգիս Վեհ. Հայրապետի բարձրագոյն հաճութեամբ և հաստատութեամբ, որը վերին հսկողն է նուիրաբերածս նպատակի անշեղ գործադրութեան»:

Արդ, նշանակելով և հաստատելով զպարգևելի Բաղդասար Արղումանեանց ի պաշտօնի պատուաւոր հոգաբարձուի դպրանոցիդ, օրհնեմք զկեանս նորա և զձեզ ամենեսին. օրհնեմք զհոգևոր դպրանոցդ, զաշխատաւորս, զվաստակաւորս և զնուիրատուս, զուսուցիչս և զաշակերտս և մաղթեմք ի Տեառնէ պահել և պահպանել զձեզ զամենեսին և զհոգևոր դպրանոցն Ղարաբաղի ընդ հովանեաւ ամենազօր աջոյ իւրոյ միշտ անսասան ի բարգաւաճ և ի ծաղկեալ վիճակի:

ԳԷՈՐԳ Ե.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ի 18 յուլիսի 1913

ըստ տոմարի ՌՅԿԲ.

№ 1042

րեալ և թէ առաջ բերված թւերը. չենք վիճում սրա մասին, որովհետև հնարաւորութիւն չունենք ստուգելու, ուստի և այդ դէպքում ձեռնպահ էլ մնում ենք, մանաւանդ որ, ներկայ դէպքում, մեզ հետաքրքրողը և տողերիս գրելու առիթ տուողը եղել են յօդուածագրի հետևեալ տողերը, որոնց վրայից լռութեամբ անցնելը ուղղակի յանցանք պէտք է համարէ ամեն մէկը, ով թէկուզ հէնց ամենափոքր չափով անգամ կողմնակից է ազգերի համերաշխութեան գաղափարին։

«Մի խօսքով,—ասում է ի միջի այլոց յօդուածագիրը,—այստեղ ներկայումս ստեղծված է շատ ծանր առմօսֆերա և եթէ ժամանակին միջոցներ ձեռք չառնվեն, գուցէ ունենայ ոչ ցանկալի հետևանք»։

Այս սև տողերի այլանդակ դէմքերը մեզ ծանօթ են. սրանք գրամոֆօնական ճշգրտութեամբ իրանց դամբարաններից գլուխները բարձրացնում են ամեն անգամ, երբ Կովկասի այնպիսի քաղաքներում, որտեղ հայեր և վրացիներ խառն են ապրում, տեղի է ունենում որևէ ընտրողական պայքար, երբ հարկաւոր է լինում առաջ մղել թեկնածուներ ժողովրդի զանազան խաւերից։ Թիֆլիսից, Թէլաւից, Սղնախից և գուցէ մեզ անյայտ նաև ուրիշ քաղաքներից։ Ահա այդ տեղերից մենք ծանօթացել ենք այդ ողորմելի տողերի այլանդակ դէմքերի հետ, Պետական Դումայի և քաղաքային իւրաքանչիւր ընտրութեան շրջաններում։

Ի՞նչ են նշանակում այդ սև ու մութ ակնարկները, ու՞մն են նրանք հարկաւոր և կամ ովքե՞ր են նրանց հեղինակները, յայտնի չեն մեզ։ Միանգամայն դատապարտելի է և ի հարկէ պախարակելի երևոյթ, երբ ընտրութիւններին մարդիկ աշխատում են տալ ազգային բնաւորութիւն. սակայն միթէ դրա դէմ կռւելու միակ միջոցն այն է, որ երկու ազգութիւնների էլ խեղճ ու կրակ դասակարգերի գլխին, որը ոչ մի բանում մաս չունի, շարունակ ծածանեցնեն «եթէ միջոցներ ձեռք չառնվեն, հետևանքը վատ կը լինի» սև դրօշակը։

Ընտրութիւնների ժամանակ միմեանց դէմ պայքարում են մի ազգութիւնից բաղկացած զանազան դասակարգեր, անգամ խմբակցութիւններ և կուսակցութիւններ։

Ինչո՞ւ որևէ դէպքում այն տեղերի «առմօսֆերաներն էլ ոչ-ցանկալի հետևանք ունենալու չափ» չեն ծանրանում։ Արդեօք ո՞չ այն պատճառով, որ այնտեղ գործում է առողջ դատողութիւնը, իսկ այստեղ միմեանց դէմ ունեցած ոչ-մաքուր հաշիւները և միս ու արիւն դարձած ատելութիւնը։

Ուշքի եկէք, պարոններ, վէն ձգեցէք այդ խայտառակ միջոցը, ընտրութիւններին ազգային բնոյթ չը տալու համար՝ ընտրեցէք աւելի արմատական ու ազնիւ միջոց, և մենք առաջինը կը լինենք, որ ձեզ հետ ձեռք-ձեռքի տուած կը կռւենք նրա դէմ։

*

Շատ ցաւալի է, որ նոյն «Սախ. Գազ.» լրագրի միևնոյն համարի մէջ այդ հարցի առիթով թերթի մշտական աշխատակից ժուռնալիստի տպած № 140 յօդուած, որ կրում է «Ժուռնալիստի օրագրից» վերնագիրը, լռութեամբ է անցնում այդ տողերի վրայից, չը մոռանալով սակայն նորից յիշելու, որ «Թիֆլիսի սօցիալիստները իրանց ձայնը Չխէիձէին տուին, որովհետև նա դէմ է վրաց աւտօնոմիային»։

Բենիամին

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ո՞ՐՏԵՂ Է ԿԱՄԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ

«Կովկասի Լրաբերը» № 177/230-ում «Էջմիածնի կամակորութիւնը» առաջնորդողով յոբելեանական հարցի առիթով դատավճիռ է կարդում Ամենայն Հայոց Կաթողիկոսի և սինոդարեան շկօլայում դիպլօմատիական կրթութիւն ստացած վարդապետների (իմա Բագրատ վ.) նկատմամբ։

Նախ և առաջ պէտք է նկատել, որ Թիֆլիսի յոբելեանական յանձնաժողովի կողմից արծարծված գրական ֆօնդի գաղափարը անիրագործելի էր, քանի որ հրապարակի վրա դրված էր արդէն դպրոցական ֆօնդի խնդիրը. և երկրորդ՝ շատ հաւանական էր, որ Կաթողիկոսը չէր կարող հաւանութիւն տալ գրական ֆօնդին և այդ առիթով թոյլտւութիւն ստանալ կառավարութիւնից, քանի որ դպրոցական ֆօնդի համար թոյլտւութիւնը արդէն ստացված էր և հանգանակութիւնն էլ աջող կերպով առաջ է ընթանում։

Այդ հանգամանքը, անշուշտ, նկատի ունէր Թիֆլիսի յոբել. յանձնաժողովը. սակայն ցանկանալով իր կամակորութիւնը առաջ տանել՝ կրկին գրական ֆօնդի խնդիրը առաջ բերեց այն ժամանակ, երբ արդէն Կաթողիկոսը առաջարկել էր Մեսրոպ եպիսկոպոսին երկու յոբել. յանձնաժողովները հաշտեցնելու և միահամուռ ուժերով ձեռնարկելու դպրոցական ֆօնդի հանգանակմանը...

Իսկ ինչու թայֆայականները գրական ֆօնդի խնդիրը մէջտեղ դրին. պատճառը հասկանալի է. որպէսզի այդ միջոցով կարողանան խափանել դպրոցական ֆօնդը։

Եւ այսպէս, եթէ ընտրվում է մի յանձնաժողով, որ անուղղակի ճանապարհով մտադրվում է ցանկալի գաղափարի ոչնչացումը կամ առ առաւելն նպաստում է նուազագոյն աջողութիւնը, շատ հասկանալի էր, որ նման յանձնաժողովը Կաթողիկոսի կողմից չէ կարող հաստատվել, և Վեհափառը ստիպված՝ մի աւելորդ անգամ ևս պէտք էր յիշեցնէր Մեսրոպ եպիսկոպոսին՝ յոբել. յանձնաժողովների միացման անհրաժեշտութեան վրա։ Ուրեմն Կաթողիկոսի կարգադրութիւնը շատ իրաւացի և օրինական է, էլ աւելին՝ ժողովրդական, որովհետև հայ հասարակութիւնը այժմ աւելի կարիք է զգում դպրոցների, քան որևէ գրականագէտի ապահովմանը։

Այսու շատ պարզ է, որ Էջմիածնի վարիչները հակընդդէմ չեն ընթանում ժողովրդական շահերին, այլ ընդհակառակը հասարակութեան աղաղակող կարիքներին աշխատում են շուտափոյթ բաւարարութիւն տալ, այնպէս որ ժողովուրդը այլևս ոչ մի առիթ չունի ձեռները լուանալու Էջմիածնից, այլ աւելի սիրով պէտք է փարվի Մայր Աթոռին, որից ստացել է, ստանում է և կը ստանայ հոգևոր և բարոյական սնունդ։

Այո, եթէ Կաթողիկոսը հաստատէր Թիֆլիսի յոբել. յանձնաժողովը և կառավարութիւնից թոյլտւութիւն ստանար գրական ֆօնդի համար, այն ժամանակ կարող էր նրա համար օտար հնչել ժողովուրդ, ընտրութիւն, իրաւունք. բայց այժմ, քանի որ նա ընթացել է ժողովրդական շահի տեսակէտից, ուրեմն այստեղ ոչ մի շահագործում չէ կարող լինել «ժողովրդի» քուէներին։

Ըստ «Կով. Լրաբերի» և «Հորիզոնի»՝ դպրոցական ֆօնդի պաշտպանները իբր թէ ղեկավարվում են յետին մտքերով, սակայն տեսնենք որքան այդ մեղադրանքը իրաւացի է։ Ցոյց տալու համար, որ իրօք գրական ֆօնդի կողմնակիցներն ունեն յետին մտքեր և ոչ մենք, բաւականանանք հետևեալ բնորոշ փաստը բերելով։

Յօդուածագիրը գրում է, թէ իբր Հայ Գրողների Ընկերութիւնը կազմված է նաև այն նպատակի համար, որ համազգային յոբելեանի առիթով գրական ֆօնդ հիմնի։

Փաստ է, որ ներկայումս գրական ֆօնդի կողմնակիցները անձնական որոշ նկատումներով են առաջնորդվում, ոչ թէ պահանջի այժմէականութեամբ։ Ուրեմն գրական ֆօնդի կողմնակիցներն են, որ յետին մտքեր ունեն, այլ ոչ թէ դպրոցական ֆօնդի անձինք։ Վերջիններս առաջնորդվում են լոկ խնդրի այժմէականութեամբ. այստեղ չը կայ ոչ մի յետին միտք։ Բազմաթիւ յօդուածներով և աղաղակող փաստերով հաստատված է այն ճշմարտութիւնը, որ ժողովուրդը ագէտ է, նրան հարկաւոր է կրթութիւն, որ կարող են տալ միմիայն դպրոցները։ Բացի այդ՝ ըստ յօդուածագրի՝ Հայ Գրող. Ընկերութեան ծրագրում յիշված է մի յօդուած, որով Ընկերութիւնը իրաւունք ունի գրական ֆօնդ հիմնելու...

Շատ լաւ։ Ուրեմն համազգային յոբելեանները այդպիսիների համար պէտք է առիթ հանդիսանային իրանց անձնական օգուտը առաջ քաշելու, և միթէ սա շահագործում չէ համազգային յոբելեանի նշանակութեանը. և այդպիսիներն են, որ ժողովրդի շահի անունից են ճառում։ Միթէ գրական ֆօնդի հիմնամբ ժողովրդի օգուտը երևելի է դառնում. և այդ տեսէք ովքեր են յետին մտքերով առաջնորդողները։ Սակայն այժմ թայֆայականները, տեսնելով որ իրանց կամակորութիւնները չեն անցնում, կարծէք թէ ուզում են բօյկօտի ենթարկել յոբելեաններին և միաժամանակ ազդարարում են ի գիտութիւն Հայ Գրողների Ընկերութեան վարչութեանը, որ իրանց ծնունդը չը դաւաճանեն։ Եւ եթէ Հայ Գրողների Ընկ. վարչութիւնը առանց Կաթողիկոսի միջամտութեան էլ կարող էր հաստատութիւն տալ գրական ֆօնդին, ապա էլ ինչո՞ւ էր դիմում Վեհափառին. և միթէ սա ևս մի փորձ չէր շահագործելու թերևս Կաթողիկոսին էլ ներկայ համազ. յոբ. հանդէսներին։

«Շահագործել» ենք ասում, որովհետև գրական ֆօնդի պահանջը առաջ է գալիս թուլացնելու և նուազեցնելու բուն ժողովրդական մի գործ, և արդ՝ ընթերցողը հեշտութեամբ կարող է եզրակացնել, թէ արդեօք ովքե՞ր են կամակորները. գրակա՞ն ֆօնդի կողմնակիցները թէ Էջմիածնի վարիչները, որի բազմաշխատ անդամներից մէկին, Բագրատ վարդապետին, սինոդար են անուանում։

Թէև հայր Բագրատի հետ կոնտրաստ յարաբերութեան մէջ ենք, սակայն այդ հանգամանքը չի թոյլատրում ինձ ուրանալու նրա անհատական բարեմասնութիւնները, գրական արժանիքները և արդիւնաւէտ գործունէութիւնը յօգուտ Մայր Աթոռի, ուստի այդպիսի գնահատմամբ մենք դատապարտում ենք յօդուածագրին անվայելուչ դարձուածքների համար, գործադրած հայր Բագրատի հասցէին։ Մեր յօդուածի ընթերցումից ընթերցող հասարակութիւնը կը գայ այն եզրակացութեան, որ Էջմիածնի վարիչները ոչ մի դէպքում չեն ընթացել հակառակ ժողովրդական շահերին, այլ ընդհակառակը ամեն կերպ ջանացել են ժողովրդի պահանջների համեմատ ընթանալ։ Ներկայ խնդրում Էջմիածնի վարիչները միանգամայն հասարակութեան ցանկութեամբ են առաջնորդվել, այնպէս որ ժողովուրդը դժուար թէ լսի պրօվօկացիական յօդուածներին և իրան հեռու վանի Էջմիածնի առաջարկի իրագործութիւնից։

Աստ. Վարդանեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

15 օգոստոսի

ՄՕՍԿՎԱ։ Ֆրանսիական զինուորական պատգամաւորութիւնը գնաց Պարիզ։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ։ «Գերմանսէն էլեքտրական ընկերութեան» բաժանմունքում 200 հազար մարկից աւելի վատնում է կատարված։ Կալանաւորված են կառավարիչն ու կասսիրչան։

ՊԵԿԻՆ։ Կալանաւորված են նացիօնալիստ պատգամաւորներ՝ 5-ը վերին և 3-ը ստորին պալատներից։ Պարլամենտը բացատրութիւն է պահանջել կառավարութիւնից կալանաւորութեան պատճառների մասին։

ԶԱԳՐԷԲ։ Մինչև այժմ Խորվատիայում խօլերայից հիւանդացել են 41 հոգի, որոնք մեծ մասամբ մեռել են։

ԼՕՆԴՕՆ։ Լլօյդին Բեռլինից առաջարկել են վերադարձնել մարգարտէ ապարանջանի արժէքը, որ գնահատված է 150,000 ֆ. ստեռլինգ և ապահովագրված է Լլօյդում և գողացվել է պօստով Պարիզից Լօնդօն ուղարկելիս։

ՉԸ ՀԱՍՑՎԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

15 օգոստոսի

Բագուից—Խէչանեանին, Պետերբուրգից—Ալէքսանեանին, Կիէվից—Պիրղուլեանին, Ախալքալաքից—Դաւթեանին։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ս. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՕՆՕՐՐԷԻ (ՏՐԻՊՊԷՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO—ՊԻՋԻԼԻՆ“
ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցվում է արկղիկին։ Իսկականը միայն մետաղեայ արկղներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։
Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ ընթացքը։
ՊԱՀԵՍՏ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախսը պօստային սակագնով։
Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղայի. Ապրանքների վաճառանոցում։
(7․) (П. 22276) 0 32

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Թիֆլիսի մի խումբ ուսուցիչների կազմած
Հայոց լեզուի առաջին տարվայ
ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ
ՄԵՐ ԴՊՐՈՑԸ
որն ամփոփում է իր մէջ՝
1) Ձեռագիր այբբենարան,
2) Ընթերցարան և
3) Արտագրութեան ձեռագիր պարզ օրինակներ։
Դասագրքի ամբողջ նիւթը նորութիւն է և զարդարված բազմաթիւ նկարներով։
Գինն է 25 կոպ.
Ճանապարհածախսով 30 կոպ., որ կարելի է ուղարկել պօստի մարկաներով։ Գումարով գնողներին զեղչ։
Դիմել՝ բոլոր գրախանութներին։ Պահեստը՝ Тифлисъ, Книжный магазинъ «Новая Жизнь», Л. Карапетянцу.
Հ. Կ. 643. 6—2

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ
ծխական դպրոցների համար հարկաւոր են
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ եւ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ
հետևեալ առարկաների համար.
Հայոց և ռուսաց լեզուի, թւաբանութեան, հայրենագիտութեան, բնագիտութեան, երկրաչափական ձևագիտութեան, ռուսաց և ընդ. աշխարհագրութեան, ռուսաց, հայոց և ընդ. պատմութեան, քաղաք. ուսմունքի և առողջապահութեան—20 րուբլի դասագնով։ Կրօնի, նկարչութեան, ձեռագործի, երգեցողութեան և ձայնագրութեան 16 ր. դասագնով։
Տեսչի պաշտօնակատար
16 դ., հոգաբարձական քարտուղարութեամբ 700 ր. ռոճիկով։ Ցանկացողներին խնդրում ենք դիմել Հոգաբարձութեան գրաւոր կամ հեռագրով մինչև ամսիս 25-ը հետևեալ հասցէով․ Ахалкалаки, Попечительству Армянскихъ Приходскихъ Училищъ, հեռագրով՝ Ахалкалаки, Попечительству.
(Կ.Հ.) 648. 3—1

Մօսկվայի հայկական երգեցիկ խմբում բաց տեղեր կան
երգիչների եւ երգչուհիների։
Ցանկացողները պէտք է դիմեն Եղիշէ Բաղդասարեանին, Լազարեան ճեմարան։
(Կ.Հ.) 652. 3—1

Կիրակի, օգոստոսի 18-ին, իշխանութեան թոյլտւութեամբ
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆԸ
Առաւօտեան ժամը 10-ին լինելու է
Տպարանական, վիմագրական եւ կազմարարական
արհեստանոցների բանւորների
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
Թիֆլիսի տպագրական գործի պրօֆէսիօնալ ընկերութեան համար նոր կանոնադրութիւն մշակելու և ընտրելու
ՀԻՄՆԱԴԻՐ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ.
Նախաձեռնողները խնդրում են բոլոր բանւորներին ներկայ լինել այդ ժողովին։
640. 3—2

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՆԹԱՇԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ
Վերաքննութիւնները օգոստոսի 19-ից, ընդունելութեան քննութիւնները՝ օգոստոսի 26-ից։ Դպրոցին կից կայ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ։ Վճարն է 30 րուբլի կիսամեակի համար։
(15, 17) 639. 2—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԱՐՇ. ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ, ՏԻԳ. ՌԱՇՄԱՃԵԱՆԻ և ԱԻ. ԽՍԱՀԱԿԵԱՆԻ կազմած
ԴԱՍԸՆԿԵՐ

1) Առաջին տարի, գունաւոր պատկերներով, 5-րդ տիպ բարեփոխված	40 կ.
2) Երկրորդ տարի, 4-րդ տիպ բարեփոխված	50 կ.
3) Երրորդ տարի 3-րդ տիպ բարեփոխված	60 կ.
4) Չորրորդ տարի	70 կ.

ԴԱՍԸՆԿԵՐՆԵՐԸ թոյլատրված են Օդեսսայի ուսումնարանական շրջանի հոգաբարձական խորհրդի կողմից որպէս դասագիրք։
Ա. տարվայ Այբբենարան տպվում է ամբողջովին ձեռագրով—բացի դրանից նոր մտցված են դասերի հետ կապ ունեցող նկարչական, պարզ գծերով զարգացրած պատկերներ։
Բոլոր տարիներն ունեն արտագրութեան համար բազմաթիւ ձեռագիր յօդուածներ՝ հիմնված ուղղագրական կանոնների վրա։
Երրորդ և չորրորդ տարիների մէջ կան բազմաթիւ ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ՁԵՒԱՓՈԽՎՈՂ ՊԱՏԿԵՐՆԵՐ։
Դիմել՝ Թիֆլիս «ԳԻՐ», «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ», Երևան՝ «ԱՐԱՍԱՏ» և Յովհաննիսեան գրավաճառներին և կամ կազմողներին՝ Երևանի թեմական դպրոց։
Գումարով գնողներին կը լինի զեղչ։
(Հ. և. հ.) 647. 12—1

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ
Նիկօլայեվսկայա, 36, Վօրօնցօվի արձանի մօտ։ Ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4—7-ը։
613. 50—9

ՈՐԴԻՔ Բ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆՑ Առևտ. Տան
ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ
(Սերգիէվսկայա փողոց № 7.)
ԾԱԽՎՈՒՄ ԵՆ ՋՈՒԼՖԱ-ԹԱՒՐԻԶ ՄԵԿՆՈՂ
Գ. Կ. ՎԱՍԻԼԻԷՎԻ ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐԻ ՏՈՄՍԱԿՆԵՐԸ։
◆ Արագընթաց աւտօմօբիլները մեկնում են՝
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը։ ◆
ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
Եղբ. Բուղաղեանների Ա/Տ. և Հաջի Հասանի
ֆայէտօնների եւ այլ կառքերի տոմսակները։
Մեկնում են ամեն օր՝
ՋՈՒԼՖԱՅԻՑ—ԹԱՒՐԻԶ
ՋՈՒԼՖԱՅԻՑ—ՇԱՐԱՖԽԱՆԱ (Ուրմիայի լճի ափերը)։
ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
Եղբ. Բուղաղեանների Ա/Տ. բարկազի տոմսակները։
Մեկնում է ամեն օր՝ ՇԱՐԱՖԽԱՆԱՅԻՑ—ՈՒՐՄԻԱ (Ուրմիայի լճի ափերը)
I, II և III կարգերով (III կարգը պալուբայի վրա)։
Կարելի է ստանալ տոմսակները նաև ուղղակի հաղորդակցութեան
ՋՈՒԼՖԱՅԻՑ—ՈՒՐՄԻԱ I, II և III կարգերի համար։
ՏԵՂԵՐԸ ՎԱՂՕՐՕՔ ԿԱՐԵԼԻ Է ԳՐԱՒԵԼ ՀԵՌԱԳՐՈՎ։
Դրամի փոխադր. Պարսկաստանի բոլոր քաղաք.
Գրասենեակը բաց է առաւօտ. ժամը 9-ից մինչև ցեր. ժ. 2-ը և ցեր. ժ. 4½-ից մինչև երեկ. ժ. 7½-ը։
(2.) 577. 10—5

ՆՈՒԽՈՒ
հայոց երկդասեան դպրոցի համար հարկաւոր են միջնակարգ կրթութեամբ
ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ
մէկը 24 դասով ռուսաց լեզուի, ռուսաց պատմութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան համար (առաւելութիւն տրվելու է փորձված սեմինարիստին), միւսը 22 դասով հայոց լեզուի, հայրենագիտութեան, հայոց և ընդհանուր պատմութեան համար։
Պայմանների մասին դիմել Հոգաբարձութեան՝ Нуха, Попечительству Армянскаго Училища.
(Կ.Հ.) 646. 3—1

Ախալցխայի Հայոց կանանց Բարեգ. Ընկերութեան արհեստանոցի համար հարկաւոր է մի վարժուհի կար ու ձևի համար, որ ունենայ հմտութիւն սովորեցնելու և փորձառութիւն պատւէրներ (заказы) կատարելու մէջ։ Ցանկացողները պայմանների համար կարող են դիմել հետևեալ հասցէով՝ Въ читальню армянскаго женскаго благотворительнаго общества въ Ахалцихѣ.
641. 3—2

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՑՕԴՈՒՏ ՀԱՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐԻ
հետևեալ հրատարակութիւնները.

1) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1906 թ. համարը, յօգուտ կովկասահայ արկածեալների	4 ր.
2) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1909 թ. համարը, յօգուտ Ադանայի արհաւիրքներին ենթակայ հայերի	4 ր.
3) «ՀԱՅԻ ԿՏՈՐ ԶԷՅԹՈՒՆՑՈՒՆ», յօգուտ Զէյթունի հայ սովեալների	2 ր.
«ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ», բժշկպ. Գ.	
4) Բարեանի I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն	1 ր.
II հատոր, Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բառարան	1 ր. 60 կ.
5) «ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ», Պ. Ադամեանի	1 ր.
6) «ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ», Քամալեանց Ս.-ի	50 կ.

Յիշեալ գրքերը Թիֆլիսում մեզանից գնողները կարող են իրանց իսկական գներով ձեռք բերել։
Թիֆլիսից դուրս պահանջողների հաշւին է ճանապարհածախսը։
1. 10—8

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный